№ 253 ՇԱԲԱԹ, 8 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1914 ՇԱԲԱԹ, 8 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 253

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
Соломоновская ул., № 21.
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 2 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Զօհրաբ և Մարիամ ԱՏՈՄԵԱՆՑՆԵՐԸ իրանց զաւակների հետ միասին յայտնում են ազգականներին և ծանօթներին իրանց անմոռանալի դստեր՝

ՍԻՐԱՆՈՅՇԻ

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ ամսիս 2-ին Աբասթումանում։ Հոգեհանգիստը կատարվելու է վաղը, կիրակի, նոյեմբերի 9-ին, Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցում։ Սկիզբը ժամը 12-ին։

985. 1—1

ԽԱԹԱԲԱԼԻՍՏՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿԻՐՆԵՐԻ, ՄԻԱՑԷՔ, և այսօր

„ԽԱԹԱԲԱԼԱՅԻ"

№ 9 կարդացէք—հայերէն և ռուսերէն տեքստով։

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» № 8 երրորդ հրատարակութիւն։ Գաւառական գործակալներին ուղարկվում է անմիջապէս։ Հասցէն՝ Тифлисъ, Редакція «ХАТАБАЛА». 988. 1—1

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՏԸ

որոշած ունենալով կազմակերպել «Ծննդեան Վաճառք» պատերազմի զոհերի համար, խնդրում է Թիֆլիսի բոլոր քաղաքացիներին նուիրաբերել առարկաներ վիճակախաղի և աուկցիոնի համար։ Ձեռագործ իրեր, նկարներ, գեղարուեստական արտադրութիւններ, արժէքաւոր առարկաներ և այլն կընդունվեն շնորհակալութեամբ։

Խնդրվում է նուիրաբերութիւններն ուղղել Քաղաքային Ուպրավային՝ Կոմիտէտի նախագահ Ալ. Իվ. Խատիսեանի կամ քարտուղար Իւ. Դ. Կորեակովի անունով։

Թիֆլիս քաղաքի թանգագին երեխաներ!

Քաղաքային Կենտրոնական Կոմիտէտը որոշած ունենալով կազմակերպել «Ծննդեան Վաճառք» պատերազմի զոհերին օգնելու համար, խնդրում է Ձեզ նուիրաբերել խաղալիքներ, տօնածառի զարդարանքներ և այլն։ Եթէ կարող էք, ինքներդ պատրաստեցէք զարդարանքները, ոսկեզօծ թղթից հիւսեցէք շղթաներ, պատրաստեցէք արկղիկներ, լապտերներ։

Բոլոր նուիրաբերութիւններն ուղարկել Քաղաքային Ուպրավա՝ Կոմիտէտի նախագահ Ալ. Իվ. Խատիսեանի կամ քարտուղար Իւ. Դ. Կորեակովի անունով։

առ. 989. 3—1

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

Երկուշաբթի, նոյեմբերի 10-ին

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿ. ԽՈՒՄԲԸ

կը ներկայացնէ

ՎԵՐԱՔՆՆԻՉ

Կոմեդիա 5 արար., Գոգոլի, թարգմ. Տէր-Աստուածատրեանի։

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ.—տ. տ. Ժամէն, Մայսուրեան, Մանուչարեան, Մարի, Ցասմիկ, պ. պ. ԱԲԷԼԵԱՆ, Ալիխանեան Իս., Ալլահվերդեան, Աւետեան, Բերոյեան, Խարէն, Մամիկոնեան, Մանուէլեան, Միրզոյեան, Մուրադեան, Տէր-Առաքելեան, Սաֆարեան, Սեւումեան և ուրիշ.։

Սկիզբը երեկոյեան ժամը ճիշդ 8-ին։

Ռէժիսոր՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ

Վարչութեան հերթապահ անդամներ՝ Խ. Աֆրիկեան, Ե. Քոչարեան

առ. 987. 2—1

ՊՕՐՏԼԱՆԴ-ՑԵՄԵՆՏ ԵՒ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԱՅԼ ՆԻՒԹԵՐ ԱՐՏԱՀԱՆՈՂ

„ԹԱՈՒԶ" ԱԿՑ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

բացել է իր գործունէութիւնը. պատրաստում է ցեմենտ թէ շինութիւնների համար և թէ ածելու (заливочный, тампотажный)։

Իր որակով ցեմենտը գերազանցում է Ճանապարհների Հաղորդակցութեան Մինիստրութիւնից հաստատված չափից։

Պատուէրները և այլ հարցերը պէտք է ուղղել գլխաւոր գրասենեակին, որ գտնվում է՝ Թիֆլիս, Սերգիէվսկայա փ. № 15. Հեռախօս № 99.

Գործարանը գտնվում է Գանձակի նահանգի Ղազախի գաւառում, երկաթուղու Թաուզ կայարանի մօտ։

Թիֆլիսում կարելի է գնել Պոնդոյեվի պահեստում, Նիկոլաևսկայա և Բակինսկայա փողոցների անկիւն, տելեֆոն № 10—93.

առ. (ե. հ. շ.) 940. 10—10

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ս. Գ. ԿԵՕՆՋԵԱՆ

վերադառնալով վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը. պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացումը առանց ցաւի։

Ընդունելութիւնը ամենայն օր.
Առաւ. 9—2 ժ.
Երեկ. 4—7 ժ.
Կիրակի օրերը 10—12.

Լերմոնտովսկայա փողոց № 1. մուտքը Նիքոփողոցից։
առ. (ա. օ.) 804. 0—55

ԲԺԻՇԿԱՊԵՏ

Մ. Յ. ՄՈՒՐԱԴԵԱՆ

նախկին օրդինատ. Մոսկվայի համալսարանի և ասիստենտ Բեռլինի համալսարանի պրոֆ. Պօզների։

Ընդունում է հիւանդներին միզասեռական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւններով՝ առ. ժ. 10—12, երեկ. ժ. 4—6։ Սօլօլակ, Ռուդչեվսկայա փող. սեփ. տուն, № 1, հրդեհաշէջների բնակատեղիի դիմացը, տելեֆոն 10—58.

(չ. ու. կ.) առ. 875. 50—24

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

Վաճառվում են հետեւեալ հրատարակութիւններից

1)	ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրձին, I և II հատորներ	1 ր. 50 կ.
2)	ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ, Հ. Առաքելեանի	40 կ.
3)	ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի, հատոր I, երկրորդ տպ.	1 ր. 20 կ.
4)	ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ, Արշ. Մխիթարեանի	40 կ.
5)	ԱՐԲԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ	15 կ.
6)	ՁԵՌՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, [illegible], Հ. Առաքելեանի	50 կ.
7)	ԿԵՐՈՆՆԵՐ, բանաստեղծ. հաւաքածու, Վ. Մալեզեանի	1 ր.
8)	ՅՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի	40 կ.
9)	ՄԻ ՀՆՁԻՒՆԻՆ ՄԻ ԳԻՐ (վիպագրութիւն), Ստ. Մալխասեանցի	40 կ.
10)	ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի	35 կ.
11)	ՃՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ, նկարներով	15 կ.
12)	ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, թարգմ Մ.-ի	15 կ.
13)	ՄԻԼՏՕՆԻ ԿԵԱՆՔԸ եւ գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի	30 կ.
14)	ԳԱԼԻԼԷՅԻ ԿԵԱՆՔԸ եւ գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի	25 կ.
15)	ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒԹ, Մակ. եպ. Բարխուդարեանի	80 կ.
16)	ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ.	1 ր. 50 կ.
17)	ԽԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳԻՐՔ. Արթիւր Միլլէրի, թարգմ. Իս. Յարութիւնեանի.	40 կ.
18)	ՓԱՐԱՒՈՆՆ ՈՒ ՀԱՆՃԱՐԸ, Աւ. Եզեկեանի.	15 կ.
19)	ОТВѢТЪ АРХІЕПИСКОПА МЕЛХИСЕТЕКА МУРАДЬЯНА НА ПОСЛАНІЕ РИМСКАГО ПАПЫ ЛЬВА XIII.	20 կ.
20)	ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԸ, ԹՈՔԱԽՏԸ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ, բժ. Արտ. Շեխեանի	20 կ.
21)	ТУБЕРКУЛОЗЪ, ЧАХОТКА и ОБЩЕСТВО, բժ. Արտ. Շեխեանի.	25 կ.

Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից՝ փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 30°/₀ զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղչ կը նուի միայն 25°/₀. (6) 0—5

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

6 նոյեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Նոյեմբերի 5-ին մօտենալով Սեվաստոպոլին, Սև ծովի մեր նաւատորմը հանդիպեց «Գեբէն» և «Բրէսլաու» յածանաւերին։ Մառախուղը թոյլ տուեց մեզ մօտենալ 40—35 փարսա տարածութեամբ։ Մեր ռազմանաւերից առաջինի կրակից հրդեհ ծագեց «Գեբէնի» վրա։ 14 րոպէ տեւող կռւից յետոյ, ենթարկվելով մեր խոշոր թնդանօթների ռմբակոծութեանը, «Գեբէնը», օգտվելով իր արագընթացութիւնից նահանջեց և անյայտացաւ մթութեան մէջ։ Նրան հետևեց և «Բրէսլաուն», որ չը մասնակցեց կռւին։

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Ծովային գեներալ շտաբի կողմից.

Ծովային գեներալ շտաբը յայտնում է, որ նոյեմբերի 5-ին, կէսօրին մօտ, Սև ծովի նաւատորմի մի մասը, վերադառնալով Անատոլիայի ափերի մօտ լողալուց և մօտենալով Սեվաստոպոլին՝ նկատեց Խերսոնի փարոսից 25 մղոն հեռաւորութեան վրա թիւրքաց մի նաւախումբ բաղկացած «Գեբէն» զրահապատ յածանաւից և «Բրէսլաու» յածանաւից։ Ռուսական նաւերը անմիջապէս գրաւեցին ռազմական կարգ և ստիպելով թշնամուն քաշվել դէպի աջ ափը, կրակ բացին որոշ տարածութիւնից։ «Եւստաֆիի»՝ 12 դիւյմանոց թնդանօթներից պարպած առաջին իսկ համազարկը ընկաւ «Գեբէնի» վրա և պայթեց նաւի մէջ տեղում, առաջ բերելով հրդեհ։ «Եւստաֆիից» յետոյ կրակ բացին մնացած ռազմանաւերը։ Մեր թնդանօթաձգութիւնը տուեց գերազանց հետևանքներ, և «Գեբէնի» վրա երևացին մի քանի ճեղքուածներ։ «Գեբէնից» կրակ պարպելը ուշացաւ։

Թշնամին, ըստ երևոյթին, չէր սպասում հանդիպումն մեր նաւատորմի հետ։ Գերմանացիք կրակում էին խոշոր թնդանօթներից, ուղղելով կրակը բացառապէս ծովակալի նաւի դէմ։

Կռիւը տևեց 14 րոպէ, որից յետոյ «Գեբէնը» արագութեամբ շրջեց և, օգտվելով իր արագընթացութիւնից, անյայտացաւ մթութեան մէջ։ «Բրէսլաուն» կռւին չը մասնակցեց և կանգնած էր հորիզոնում։ Աննշան վնասուածքներ ստացաւ միայն «Եւստաֆին»։ Մեր կողմից սպանվեցին լէյտէնանտ Եւգենիյ Միազգովսկին, միչմաններ Նիկոլայ Էյլէր, Նիկոլայ Սեմէնով և Սերգէյ Գրիգորէնկո և 29 նաւաստի-զինուոր։ Ծանր վիրաւորվեց միչման Ն. Գնիլոսիրովը։ Զինուորներից վիրաւորվեցին 24 հոգի, որոնցից 19 ծանր։

(Երեկոյեան հաղորդագրութիւն)

7 նոյեմբերի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Նոյեմբերի 6-ին մեր ռազմանաւերը ռմբակոծեցին Խոպան, ուր թիւրքերը պատրաստվում և յարձակումներ էին գործում Անդրճորոխեան շրջանի զանազան կիրճերով։

Ռազմանաւերի թնդանօթային կրակից քարուքանդ են եղել նաւահանգիստը, զօրանոցները, մաքսատունը և պայթեցված է ռազմամթերային պահեստը. նաւահանգստային պահեստները հրդեհված են։

Օլթի-չայի հովտում թիւրքերը ետ են շպրտված դէպի Բարու։

Էրզրումի ուղղութեամբ, Իւզվերանի մօտ, մեր զօրասիւնը ջարդեց թիւրքերին։

Միւս զօրամասերում նշանաւոր փոփոխութիւններ չեն եղել։

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

6 նոյեմբերի

ԹԱՒՐԻԶ.—Այն տպաւորութեան տակ, թէ ռուսական բանկը մեկնում է, երեք օր առաջ անգլիական բանկի առաջ խռնվեց ամբոխ, պահանջելով թղթադրամները փոխել արծաթով։ Հարկ եղաւ ոստիկանութեան միջամտութիւնը։ Այժմ իրարանցումը վերջացել է, քաղաքում հանգիստ է. բնակիչներն այլևս չեն փախչում քաղաքից։

Թաւրիզի ռուս և օտարազգի գաղութները ցանկութիւն են յայտնել պահել Ատրպատականի զօրամասի 150 վիրաւորի։

ԹԵՀՐԱՆ.—Տեղումս ստացված ռուսական լրագիրները, որոնք մեղադրում են Պարսկաստանին Գերմանիայի և Թիւրքիայի հետ համաձայնութիւն կապելու մէջ, իրարանցում ձգեցին ղեկավար շրջաններում։ Եւրոպական պատերազմի ծագման ժամանակից Պարսկաստանը, ըստ երևոյթին, մտորում էր Թիւրքիայի օգնութեամբ դուրս հանել ռուս զօրքերին Ատրպատականից և յաղթական Գերմանիայի աջակցութեամբ ազատվել Ռուսաստանի և Անգլիայի խնամակալութիւնից։ Սակայն մեր մամուլի երկիւղներն անհիմն են։ Գերմանական ոսկին այստեղ չէ երեւում։ Սրբազան պատերազմի կոչերն անազդ են, վաչկատուն ցեղերի մէջ լուրջ շարժում յարուցանելու ջանքերը աջողութիւն չունեցան։ Թիւրքիայի յայտարարած պատերազմը և Գերմանիայի դաւերը ստիպեցին պարսիկներին համոզվել այն բանում, որ միակ միջոցը՝ չը միանալու Թիւրքիայի վիճակին՝ բարեկամական չէզոքութիւնն է Ռուսաստանի վերաբերութեամբ, և պարսից կառավարութիւնը վճռել է վարել հէնց այդպիսի քաղաքականութիւն։

Երէկ անգլիական բանկում թղթադրամները ընդարձակ չափերով փոխանակում էին արծաթով։ Թօփխանէ հրապարակը լի է ամբոխով, որին հազիւ է զսպում ժանդարմէրիան։ Դրամափոխութեան պատճառը ըստ երևոյթին թիւրք-գերմանական ագիտացիան է և թիւրքաց դեսպանատան թռուցիկներն են՝ թիւրքերի աջողութիւնների ու քիւրդերի արշաւանքի մասին։

ԼՈՆԴՈՆ.—Մահմէդական իշխանները և անգլիական գաղութային երկիրների երևելիները շարունակ հաւաստիացնում են, որ իրանք հաւատարիմ են և այդպէս էլ կը մնան Անգլիային։ Բօրնէօ կղզու սուլթանը այդ մասին յատուկ գրութիւն է ուղարկել Գէօրգ թագաւորին։ Արևմտեան Աֆրիկայի Սոկոտօ տեղական թագաւորութեան սուլթանը 1000 ֆունտ ստէրլինգ է փոխադրել պատերազմի կարիքների համար։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պարզվել է, որ Գերմանիան, որպէսզի Թիւրքիան շտապէ հանդէս գալու ընդդէմ դաշնակիցների, կամենալով ազդել հասարակական կարծիքի վրա, վարձատրում էր թիւրքաց լրագիրներում աւստրիական չեղեալ յաղթութիւնների և գերմանացիների աջողութիւնների մասին մտացածին տեղեկութիւններ տպելու համար։ Յաճախ՝ այդ հեռագիրների աղբիւրները, աւելի աջողութեան համար, նշանակվում էին Պարիզը և Լոնդոնը։

ԿԱՀԻՐԷ.—Դրութիւնը Եգիպտոսում նորմալ է։ Անգլիական զինուորական իշխանութիւնները ընդարձակ միջոցներ են ձեռք առնում սահմանների ապահովութիւնը պաշտպանելու և Թիւրքիայի հնարաւոր յարձակումները վանելու համար։ Մահմեդականների կրօնական-քաղաքական խմբակները, նաև ազգաբնակութիւնը հաւատարիմ են մնում Անգլիային։

ԼՕՆԴՕՆ.—Վաշինգտոնի կառավարութիւնը յանձնարարել է Կ. Պոլսի իր դեսպանին հարց տալ Բ. Դռանը, թէ ինչ հանգամանքներումն է ռմբակոծվել «Տենէսի» զրահանաւը Զմիւռնիայի մօտ։

Ծովային մինիստրը հեռագրեց «Սեվէրնայա» և «Կարօլինա» յածանաւերի հրամանատարներին, որպէսզի նրանք վարվեն Վաշինգտոնից ուղարկվելիք հրահանգի համաձայն և չը ձեռնարկեն այնպիսի քայլեր, որոնք կարող են կառավարութեանը դնել դժուարին կացութեան մէջ «Տենէսին» ռմբակոծելու առիթով։

(Լրագիրներից)

◆ Իգդիրից հեռագրում են «К. Сл.»-ին. «Թափարիզի մօտ տեղի ունեցաւ տաք կռիւ։ Հազարաւոր ասկէրներ և քիւրդեր վայրենի աղաղակներով յարձակվեցին կամաւորների վրա, բայց ետ մղվեցին կորուստներով։ Պարզվել է, որ հակառակորդը կորցրել է աւելի քան 100 սպանված ու 60 ծանր վիրաւոր. լուրերի համաձայն, 60 հոգի մեզ գերի են ընկել»։

◆ Լուրերին նայած, Շատախում ապստամբված հայերի վրա յարձակված զօրամասերը գլխովին ջարդ են կրել։

◆ Բաշկալէի շրջակայքում՝ Վանի արուարձանում ապստամբութեան դրօշակ են բարձրացրել հայերը և ասօրիները։

◆ Համառուսական զէմստվային միութեան գլխաւոր լիազօր իշխան Լվօվը գալու է Թիֆլիս՝ պարզելու միութեան գործունէութիւնը կովկասեան ռազմադաշտի վրա տարածելու հարցը։

◆ Պետ. Դուման սանիտարական խումբ է ուղարկում ռուս-թիւրքական պատերազմաբեմը։

◆ Մոսկվայի հայոց կոմիտէտը իր լիազօրներին ուղարկում է Կովկաս։ Նրանցից մէկը պէտք է կոմիտէտի ներկայացուցիչը լինի Թիֆլիսի կենտրոնական բիւրօյում։ Մշակվել է սանիտարական ու այլ օգնութեան լայն ծրագիր։

◆ Իգդիրից հեռագրում են, որ նուաճված տեղերից ամեն օր մեծ թւով երիտասարդներ են գալիս և խնդրում են տալ իրանց զէնք ու կազմակերպել ինքնապաշտպանութիւն։

◆ Վերջին տեղեկութիւնների համաձայն Էրզրումի ու Հասան-Կալէի միջև թիւրքերը կենտրոնացրել են 70,000 կանոնաւոր զինուոր վեց գնդակացիր վաշտերով։

◆ «К. Сл.»-ին հեռագրում են Երեւանից, որ Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոպ սիրալիր ընդունելութիւն է ցոյց տուել գեներալ Օգանովսկիին և գեներալ Լեախովին և օրհնել է նրանց։

◆ Վրաստանի էկզարխ Պիտիրիմ արքեպիսկոպոսը Կարսում հոգեհանգիստ է կատարել 1878 թ. Կարսի մօտ ընկած զօրականների յիշատակին՝ տեղական իշխանութիւնների, օֆիցերութեան, զօրքերի և բազմաթիւ աղօթողների ներկայութեամբ։

◆ «Б. В.»-ին հեռագրում են, որ Թիւրքերը վճռել են Հայաստանում բաւականանալ ինքնապաշտպանողական պատերազմով. գլխաւոր ուժերը կենտրոնանալու են Մարմարա ծովափում։

ԷՐԶՐՈՒՄ

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ ներկայ ռուս-թիւրքական պատերազմը ինքն ըստ ինքեան առաջ է բերում մեծ հետաքրքրութիւն հասարակութեան լայն խաւերում, մենք աւելորդ չենք համարում ատոր առաջ բերել Էրզրումի նկարագիրը, մանաւանդ որ այդ քաղաքը, լինելով Թիւրքաց Հայաստանի մայրաքաղաքը և ներկայացնելով իրանից առաջնակարգ ամրութիւն, պատերազմական գործողութիւններով շահագրգռուողների ամբողջ ուշադրութիւնը գրաւել է դէպի ինքը։

Էրզրումը, որ կոչվում է նոյնպէս Կարին (անցեալում անուանվել է նաև Թէոդոսուպոլիս) Բարձր Հայքի համանուն կուսակալութեան և գաւառի գլխաւոր քաղաքն է։ Նա հին և պատմական ու քաղաքական դէպքերով հռչակված է և գտնվում է 39,55' արևելեան երկայնութեան և 39,15' հիւսիսային լայնութեան տակ, ծովի մակերևոյթից 2070 մետր բարձր։ Թէև համարվում է շինված Թէոդոս կայսրից, բայց նրանից առաջ էլ յիշվում է պատմութեան մէջ։ Մի ժամանակ հռոմայեցիների ձեռքին էր և պարսից հետ ունեցած երկարատև պատերազմների միջոցին՝ գլխաւոր կայան և կռուան էր նրանց համար։ IV դարի վերջին, երբ հայոց Արշակունեան թագաւորութիւնը վերջացաւ, Հոռոմական Հայաստանի հետ միասին Կարինն էլ ընկաւ Բիւզանդիայի իշխանութեան ներքոյ և դարձեալ դարձաւ կռուան պարսից դէմ պատերազմների ժամանակ։ Այդ նպատակով Թէոդոս Կրտսեր կայսրը մտածեց մի ամուր քաղաք և բերդ շինել և 421 թ. Անատոլ զօրավարին ուղարկեց Հայաստան այդ նպատակով. նա էլ առաջ ամրացրեց Ամիթ քաղաքը, իսկ յետոյ Էրզրումի գաւառում շինեց, կամ, աւելի ճիշտն ասած, ամուր քաղաքի և բերդի վերածեց Էրզրումը, անուանելով նրան Թէոդուպոլիս։ Պարսից Որմիզդ թագաւորն աշխատեց վրաց Վախտանգ թագաւորի ձեռքով խլել այս քաղաքը 400 թ., բայց չը կարողացաւ։ Սակայն Կաւատ թագաւորը տիրեց 502-ին, իսկ 503-ին յոյները առան և ամրացրին։ VI դարի կէսին Յուստինիանոս կայսրը նոր ամրութիւններ և ս. Աստուածածնի եկեղեցին կառուցեց, բայց այդ դարի վերջին՝ պարսիկները նորից տիրացան Աշոտ անունով մի հայի ձեռքով և բնակիչների մեծ մասը Յովհան կաթողիկոսի հետ գերի տարան Պարսկաստանի Համադան քաղաքը։ Հաշտութիւնից յետոյ Էրզրումը դարձեալ մնաց յունաց և 628 թ. Հերակլ կայսրը դէպի Պարսկաստան արշաւելիս այստեղ եկաւ, նորոգեց խանգարված պարիսպները և 629 թ. գումարել տուեց հայոց Եզր կաթողիկոսին եկեղեցական ժողով, հայոց և յունաց միաբանութեան համար։ Սակայն 647 թ. արաբացիները տիրեցին և ամբողջ դար պահեցին իրանց ձեռքում, մինչև որ 752 թ. Կոստանդին Կոպրոնիմոս տիրեց, բայց մի քիչ յետոյ արաբացիք դարձեալ գրաւեցին և 808 թ. նահատակեցին հայոց Սահակ և Յովսէփ իշխաններին։ X դարի կէսում Էրզրումն ընկաւ Խարազմեան Թուրքերի ձեռքը, ապա՝ յոյների, որոնց ձեռքում մնաց նաև XI դարում, որից յետոյ տիրեց Թուրքաց Տուղրիլ սուլթանը և այդ ժամանակից սկսեց կոչվել Արզ-ի-ռում կամ Էրզրում։ XIII դարի սկիզբը վրաց Թամար թագուհու հայ զօրավարներ Իվանէ և Զաքարէ տիրեցին Էրզրումին, խլելով Սեբաստիայի սուլթանից, իսկ 1238 և 1247 թւերին մօնղոլ թաթարները աւերեցին։ XIV դարի վերջին՝ Լէնգթէմուրը աւերեց և վերջապէս XV դարում օսմանցիք տիրեցին, որոնց ձեռքում գտնվում է մինչև այսօր։

Բայց այդ օրից մինչև այսօր պարսիկների, օսմանցիների և ռուսների միջև մի քանի անգամ պատերազմներ եղան և Էրզրումը մի քանի անգամ ընկաւ պարսից և ռուսաց ձեռքը։

1829 թ. յունիսի 27-ին Էրզրումին տիրեցին ռուսները, բայց հաշտութիւնից յետոյ՝ թողեցին օսմանցոց։ Վերջին ռուս-թիւրքական պատերազմին ռուսները դարձեալ տիրեցին Էրզրումին 1878 թ., և գեներալ Լօրիս-Մելիքովը գրաւելով քաղաքը՝ նշանակեց ռուս զինւորական կառավարիչ, ապա կառավարութիւնը յանձնեց Լազրեվ հայ գեներալին, բայց 7 ամիս մնալով, Բեռլինի դաշնադրութեամբ, Էրզրումը դարձեալ անցաւ օսմանեան պետութեան։

Ներկայումս Էրզրումը՝ Օսմանեան Հայաստանի գլխաւոր քաղաքը՝ բաղկացած է 3 մասերից՝ միջնաբերդից, բերդից և արուարձանից։ Բնակիչների (Թիւրք, հայ, յոյն) թիւը, ըստ Կինէի 38,906 է, որից մուսուլմաններ (Թիւրք և պարսիկ) 26,564, հայեր (լուսաւորչական, կաթոլիկ, բողոքական) 10,435, յոյներ՝ 484, հրէաներ, ղըլտիք և այլն՝ 1423։ Սակայն հնումն բնակիչների թիւը աւելի մեծ է եղել։ Ըստ Ինճիճեանի՝ 19-րդ դարի սկզբին Էրզրումն ունէր 100,000 Թիւրք և 13,000 հայ բնակիչներ։ Բարունակ բէյ Ֆերուհեան 1847 թ. հաշւել է 65,400 բնակիչ, որից մուսուլման՝ 57,100 հոգի, հայ՝ 7700 հոգի, յոյն՝ 200 և բօշա՝ 400, իսկ 1853—1856 թ. հայերի թիւն էր 10,300 (լուսաւորչական) և 500 (կաթոլիկ)։ Անցեալ դարի 20-ական թւականներին, հայերի թիւը 4000 տուն էր, բայց երբ ռուս-թիւրքական պատերազմը վերջացաւ, գրեթէ բոլոր հայերը, իրանց առաջնորդ Կարապետ եպիսկոպոսի յորդորանքով և ղեկավարութեամբ, գաղթեցին և եկան Ախալցխա, նրանց հետ և հայ-կաթոլիկներ՝ իրանց առաջնորդ Եփրեմ վ. Մէլքեանի հետ։ Էրզրումում մնաց միայն 20 տուն, բայց յետոյ գաղթականների մի մասը վերադարձաւ և մնացածների փոխարէն Բաբերդից, Երզնկայից, Խարբերդից, Արաբկիրից նոր գաղթականներ եկան, հաստատվեցին։

Քաղաքի հասարակական և ազգային շինութիւնների մէջ աչքի են ընկնում՝ 1) Չիֆթէ մինարէն, որ շինվել է 962 թ. երկու մզկիթ և ճեմարան Մէլիք խան Խարազմի ձեռքով, 40 սենեակներով։ 2) Ուլու-ջամի մզկիթը, որ առաջ յունական դիւանատուն կամ մատենադարան է եղել և 1178 թւին մզկիթի է վերածվել։ 3) Մողոլ ապարանքը։ 4) Հայոց ս. Աստուածածին եկեղեցին, շինված 1840 թ.։ 5) Սանասարեան հայոց միջնակարգ դպրոցը, հիմնված 1881 թ.։ 6) Հայոց մայր վարժարանը՝ Արծնեան շէնքով։ 7) Հռիփսիմեան 6-դասեան օրիորդաց վարժարանը։ 8) Ամերիկեան որբանոցը։ Առաջ մուսուլմանները ունեցել են մօտ 200 մզկիթ, թէքքեներ, այժմ ունեն միայն 65 մզկիթ, 16 թէքքէ և 10 մէդրէսէ։ Յիշենք այստեղ, որ 1583 թ. Էրզրումը կործանվեց մի մեծ երկրաշարժով, որի մասին յիշում է Վենետիկի՝ Ասորեստանի հիւպատոս Պետրոս Միքէլը։

Հ. Ա.

ԹՈՒՐՔ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԱՏԸ

II

Մեր ձեռքի տակ է մի հետաքրքրական գրքոյկ, որ Կ. Պոլսում 1913 թ. հրատարակել է Թիւրքահայ գործիչ պ. Ատոմը (կեղծանուն մի յայտնի դաշնակցականի)։ Գրքոյկը ունի հետևեալ վերտառութիւնը. «Օսմանեան կայսրութեան անկման պատմութիւնը. երիտասարդ-Թիւրքերու վերանորոգուող դպրոցը»։ Պ. Ատոմը իր աշխատութեան մէջ երկու նպատակ է յետապնդել. Նախ ծանօթացնել հայ ընթերցողներին կրէտացի Ջէլալ Նուրի բէյի Թիւրք լեզուով հրատարակած համանուն աշխատութեան հետ, ապա բանավէճ բանալ նրա մի քանի Թիւր ըմբռնումների դէմ։ Ասենք այստեղ, որ պ. Ատոմը հետաքրքրական և յաճախ խելացի առարկութիւններ է անում Ջէլալ Նուրիին, սակայն մեզ հետաքրքրողը այժմ դա չէ, այլ այն, թէ մի երիտասարդ և, ինչպէս երևում է, բազմակողմանի մտաւոր պատրաստութիւն ունեցող Թիւրք որպիսի հայեացք ունի իր ազգային նկարագրի մասին։ Եւ Ջէլալ Նուրին Թիւրք անցեալի մասին հետևեալ խորհրդածութիւններն է անում.

«Հռոմի նման՝ Թիւրքիան ևս մըշտական պատերազմի մէջ էր։ Երկու ընկերութեանց և պետութեանց ծագումին և հիմունքներուն միջև ևս նմանութիւն կայ։ Հռոմուլոսի հպատակները Հռոմի առաջին զինուորներն էին։ Ժամանակին, արդէն Հռոմը ամբողջ այս զինուորներէն էր բաղկացած։ Հռոմի բնակիչները մեծ ուրախութիւնով ու յափշտակութիւնով կը պատերազմէին, որովհետև պատերազմէն յետոյ բոլորն ալ մեծ աւարով կը վերադառնային։ Հին Հռոմի մէջ արհեստ ու վաճառականութիւն չկար։ Այնտեղ միայն աւարի վրայ կը մտածէին ու կը խօսէին։ Մոնթեսքիէօ Հռոմի այս դրութիւնը կը նմանցնէ Թաթարներու մէջ տիրող կարգին։

«Հռոմի առաջին շրջանին ևս մեր մէջ եղած վիճակը կը տեսնենք։ Այնտեղ ևս հարստութեան տիրանալու համար պատերազմի կը երթային։ Մեծ քանակութեամբ աւար առնելէ դուրս հնար չկար։ Վաճառականութիւնն ու արհեստները գերիներու աշխատանքի բաժինն էր։ Օսմանցիներու նուաճողական շրջանին մէջ Թիւրքերը վաճառականութեան, արհեստի, երկրագործութեան շատ ալ չէին կարող նայիլ։ Որովհետև նախ՝ պատերազմներու և յաղթութիւններու մասնակցելով՝ թշնամիէն երկրին մէջ արշաւել ու առատ ալրանք ու հարստութիւն ձեռք բերելը աւելի հեշտ բան էր, երկրորդ՝ յաղթութիւններով արբեցած առանձնաշնորհեալ ազգի մը պատերազմիկ գօտիներու համար քիչ մը ծանր կուգային արուեստներն ու արհեստները»։ (Ատոմի գրքոյկի 13—14 էջերը)։

Ջէլալ Նուրիի այս դատողութիւնները մատնանշում են այն, ինչ տարիներ առաջ ասել ենք մենք։ Թիւրքիան հանդէս է եկել որպէս պետութիւն-բանակ, և ռազմականութիւնը Թիւրքերի համար արտադրողական միջոց է եղել և դա էլ այսօր անկման դուռն է հասցրել Թիւրք կայսրութիւնը։ Հետաքրքրական է այստեղ պարզել մի հանգամանք. ինչպէս եղաւ, որ արհեստներ, վաճառականութիւն և երկրագործութիւն չունեցող Թիւրքը, այսինքն կուլտուրական ամենացածր աստիճանի վրա կանգնած մի ցեղ կարողացաւ նուաճել բարձր կուլտուրական երկիրներ, օրինակ, Բիւզանդիան։ Մի՞թէ Թիւրքերի յաղթութիւնները պէտք էր վերագրել Մուհամմէդ Ֆաթիհի բարձր անձնական ունակութիւններին կամ թէ Թիւրք ցեղի բարոյական առաքինութիւններին ու յոյների արատներին, մի՞թէ ճշմարտութիւն չէ պարունակում իր մէջ այն միտքը, թէ քաղաքակրթութիւնը յաղթանակող է, և միթէ հէնց քաղաքակրթութեան բացակայութեան շնորհիւ չէ այսօր ճարճատւում Թիւրք պետութիւնը։ Արդ՝ ինչպէս եղաւ, որ բարձր քաղաքակրթութեան տէր Բիւզանդիան խոնարհվեց մի թափառական ցեղի առաջ։ Մնում է ասել, որ ամէն մի քաղաքակրթութիւնը՝ յաղթանակող ոյժ չէ պարունակում իր մէջ։ Բիւզանդիայի քաղաքակրթութիւնը տիրող դասակարգերի քաղաքակրթութիւն էր, որի պահպանութեամբ չէին շահագրգռված ժողովրդական ստորին խաւերը. Նրանք անմասն էին այդ քաղաքակրթութեան բարիքներից և հէնց յանուն դրա էլ շահագործված ու խղճուկ դրութեան հասած՝ մինչև դիմադրել լինելու աստիճան։ Այն ինչ՝ Թիւրքերի ստորին քաղաքակրթութիւնը խարսխված էր տոհմական բնազդների և համայնական առաքինութիւնների վրա։ Թիւրք ցեղը խիստ շերտաւորված կազմ չունէր. նա դէմոկրատիկ էր իր էութեամբ։ Թիւրքական ձեռնարկութիւնների մէջ շահագրգռված էին ամենքը, թէ հասարակ զինւորը և թէ զօրապետը։ Բանակի կեանքը բոլորին տոգորում էր միևնոյն ձգտումներով և բոլորին մօտեցնում իրար։ Եւ երբ ընդհարվեցին անհատապաշտ բիւզանդական և համայնական ու տոհմական Թիւրք կուլտուրաները—արդիւնք տարբեր տնտեսական-հասարակական կառուցուածքների—յաղթողը հանդիսացաւ մասսաներ ծառայող Թիւրք ստորին քաղաքակրթութիւնը։ Այսպիսով յաղթանակող է այն քաղաքակրթութիւնը, որը զօրաւոր կապերով շղկապում է հօծ բազմութիւնները։ Դրան հակառակ գործող քաղաքակրթութիւնը, որքան էլ արտաքին փայլ ունենայ, այնու ամենայնիւ չի կարող յարատև գոյութիւն պահպանել, նա պիտի կործանվի, երբ դառնում է լոկ արտօնեալ փոքրամասնութեան շահատակութիւնների պատուանդան։ Այսպէս կործանվեցին Հռոմի և Բիւզանդիայի կուլտուրաները։

Հայաստանում, Բիւզանդիայում և այլ հինաւուրց կուլտուրաներ ունեցող երկիրներում տեղաւորվեց Թիւրք խաշնարածը և թափառական զօրականը։ Նուաճված երկիրներում պատմութեան անիւը շրջվեց. հին քաղաքակիրթ ազգերն իրանց երիտասարդական շրջանից իջան դէպի տղայութիւն և սկսեցին Թիւրքերի հետ միասին վերապրել մի անգամ արդէն առանձնակի անձանց քաղաքակրթութեան փուլերը։ Բայց Թիւրքը իր նուաճողական գործերից յետոյ իրանից չը ձգեց առանձնաշնորհեալի ու զինւորականի դրութիւնը, և պատմութիւնը սկսեց պատիժներ տեղալ նրա գլխին։ Ահա ինչ խորհրդածութիւններ է անում այդ առիթով Ջէլալ Նուրին.

«Աւարը անվերջ չէ…

«Ահա Հռոմի զինուորները՝ սրնախ տաւարները, և ապա Ասիոյ և Ափրիկէի ազգերը կողոպտելով ու կճպելով մերկացնելէ յետոյ Հռոմն ալ կողոպտել սկսան։ Աւարը վերջապէս կը հատնի, շրջակայ ազգերը զգաստութեան շրջանի մէջ կը մտնեն։ Սկիզբը, յաղթութեան ոգևորութիւններով կուռ դաշտ նետուող զինուորը այլ ևս կը ծուլանայ, կը յոգնի, կը ծերանայ, և պետութիւնն ալ անկումի անդունդը կը իյնայ։ Իշխանութիւնը միայն զինուորութենէ չէ բաղկացած, վարչական ճիւղն ալ ունի։ Ներքին, ֆինանսական և տնտեսական խնդիրներուն այնքան ալ կարևորութիւն չընծայող, զանոնք իրենց սրտին մօտ չզգացող ընկերութիւնները վերջապէս քայքայման կենթարկուին» (Նոյն հեղինակի գրքոյկի 19—20 էջերը)։

Ջէլալ Նուրին այստեղ նորից մատը դրել է Թիւրք պետականութեան ծանր խոցի վրա։ Սակայն զգաստացման և շինարար գործի քարոզը ուշ է հընչվել Թիւրքիայում, այն ժամանակ, երբ նա ներսից ճարճատվում էր ու դրսից ցանցված էր անկշտում պարտատէրերի ոստայնում։ Հարկաւ չէր կարելի ասել, թէ Ջէլալ Նուրիների ջանքերը ապարդիւն պիտի անցնէին, թէ նրանց համար անկարելի բան էր վերածնել Թիւրքիան։ Ցաւը նրանումն է, որ Ջէլալ Նուրիները անզօր էին իրանց քանակով և ապա ստացել էին մի ժառանգութիւն, որին չի կարելի հեշտութեամբ կազդուրել և որին դժուար է պատուաստել «նոր վարք ու նոր բարք»։ Կայ նաև այն հանգամանքը, որ որքան Նուրիները անզօր քննադատ էին, այնքան հետևողական ստեղծագործողներ չէին։ Նրանց շինարար ձգտումների մէջ պակաս տեղ չի բռնում հին ռազմականութիւնը և մանր ազգերին ձուլելու տենչը, հին արատներ, որոնցից քայքայման դուռն է հասել նախկին հզօր պետութիւնը։

Պատմութիւնը անպատիժ չէ թողնում արտօնեալներին։ Մի ժողովրդի բարեկեցութիւն չի կարող խարսխվել մնացած ժողովուրդների թշուառութեան վրա։ Այդ արատը չը դատապարտվեց և չը մերժվեց Թիւրքիայում. Նա ընդհակառակը պաշտպանվեց Թիւրք ցեղի ամբողջովին զինւորված ուժով։ Այդ զինւորված ուժը այսօր նորից հրապարակ է եկել փայլ տալու իր խամրած հռչակին։ Եւ դա մի փորձ է, որ նորից մերժում է պետական ներքին շինարար աշխատանքը և աշխարհին ի ցոյց հանում հին թափառական Թիւրքի ռազմասէր դէմքը։ Պէտք է կարծել, որ զէնքի պաշտամունքը այս անգամ կը հարուածէ նրա անյագ սիրահարին։

Դ. Անանուն

ԱՐԵԱՆ ՀՈՎԻՏԸ

> «Գրիչս անզօր է պատկերացնել Թիւրք դաժան բռնակալների անծայր սանձարձակութիւնը, գազանային անզուսպ կիրքը և աներևակայելի ու քստմնելի մեղսագործութիւնը»։
>
> «Թայմս» յատուկ թղթակից Նորման

Մեծ-Ռուսաստանը XIX դարում, իր քաղաքական ու տնտեսական զարգացման փայլուն ապագայի գեղատես հեռանկարով ոգևորված, երեք անգամ (1828 թ., 1854 թ. և 1877 թ.), փորձեց խեղդաման անել Փոքր-Ասիայի միահեծան բռնակալութեան մարմնացեալ տիպար «հիւանդ Թիւրքիային», բայց դժբաղդաբար երեք անգամ էլ նրա ամրակուռ բռունցքն ուժգին թափով բարձրանալով՝ հանդիպեց «միջազգային խաղաղասէր դիպլօմատիայի» անպարտելի դիմադրութեանը և այդպիսով հզօր պետութեան մահաբեր հարուածը չը ջախջախեց արևելեան Հիւդրայի թունաւոր գլուխը…

Իսկ մինչ այդ՝ Անատոլիայի արևմաքամ հայ ժողովուրդը սովորված եղաւ տանել դարաւոր գերութեան անխորտակելի շղթաները, ճակատագրի անլուր տանջանքի ու ծով-արցունքի անիծված բեռը, մատնվելով քաղաքական ու տնտեսական յարատև ստրկութեան…

1877 թ. ռուս-Թիւրքական պատերազմը կրկին զարթեցրեց ազատատենչ ժողովրդի խոցոտված սրտում ոսկի՝ երազներ և ոսկի՝ յոյսեր… Բայց նոյն «խաղաղասէր դիպլօմատիայի» աներևոյթ ձեռքի մի թեթև շարժումը փշուր-փշուր խորտակեց բազմատանջ հայութեան նուիրական ապրումները և կենսաբեր սպասելիքները…

Կոգովիտ, Բագրևանդ և Բասէն—ահա այն սահմանակից հայկական գաւառներից մի քանիսը, ուր բազմիցս անգամ արեան հեղեղը քշել ու կուլ է տուել մարդկային անհամար զոհեր. ահա այն տառապանքի ու նզովքի հովիտը, ուր, հէնց միայն վերջին 75-ամեակում, ռումբերի մահատարած որոտմներից, հասարակական կեանքը մեռելութեան է մատնվել։

Այդ հովիտն է մտել այսօր, յաղթական քայլերգով, ռուս ազատարար բանակը և անձնազոհ կամաւորների գնդերն, որոնց անսահման ցնծութեամբ և անծայր օվացիաներով է ընդունում հայ դարատանջ, կմախքացած մասսան… Բռնակալութեան ճիրաններում տնքացող ժողովուրդն իր աւանդական համբերութեան հաւատարիմ՝ պատրաստ է Ռուսաստանի փրկարար զօրքի առաջխաղացութեան և ռազմական աջողութեան որպէս անսասան պարիսպ զոհաբերել ոչ միայն իր ամբողջ կարողութիւնը, այլև այն, ինչ որ անգնահատելի է՝ կեանք։

Այդ գաւառների ճմլված ու ստրկացած հայ գիւղացիութիւնն այսօր, իր ազատագրութեան սրբազան ժամին, կենդանացել, արիացել և ոգևորվել է… Նա իր ցաւատանջ ու աղերսագին հայեացքը յառել է դէպի աւետաբեր հիւսիս, դէպի անվեհեր մարտիկները… Ա՜խ այդ հայեացքը. Նա շատ ազդու և շատ խորիմաստ է… Նոյնիսկ անլուր տառապանքի ու հեծեծանքի բովէին, կատաղած խեղդող կոշմարի տակ, մահատարած փոթորկի ժամին Թիւրքահայ ժողովուրդը չի փոխել այդ պատմական հայեացքը, չի դադարել երգելուց իր վարդագոյն յոյսերի և փայփայած ձգտումների գովքը… Հայ ժողովուրդը, միջնադարեան հերոս-ասպետի նման, իր պաշտելի դիցուհու ազատութեան համար տանջվե՜լ ու տանջվե՜լ, սպասե՜լ ու սպասե՜լ և… քաջացել է իր հոգեկան ոսկեթելիկ խոհերի ու ապրումների մէջ…

Այդ ազատատենչ վառ զգացումն անցել է որդուց որդի, սերնդից սերունդ, սնվել ու ապրել, բորբոքվել ու տարածվել է, զուլումի երկրում կենդանացրել ու ոգևորել է մի ամբողջ ժողովուրդ… Բայց այդ զգացումը պաշտելու և պաշտպանելու համար նա անխնայ հալածվել, նահատակվել է…

Վերյիշենք Թիւրքահայ ժողովրդի մարտիրոսագրական պատմութիւնից մի սև էջ…

1877 թ. ռուս-Թիւրքական պատերազմի առաջին շրջանում գեներալ Տէր-Ղուկասովի զօրաբանակն Իգդիրի վրայով մտաւ Կոգովիտ գաւառը և համարեա անարգել տիրեց Բայազիդ բերդաքաղաքին։

Հայ ժողովուրդը, հաւատարիմ իր աւանդական ծով զգացումներին, անսահման ցնծութեամբ, խաչ ու խաչվառով և անծայր օվացիաներով դիմաւորեց իր ազատարարներին։

Քաջերի բանակը տիրելով անառիկ բերդին՝ յանձնեց նրա պաշտպանութիւնը մօտ 2000 պահապան-կօզակների, և ինքը առաջ խաղաց Հայաստանի ստորին գաւառները…

Նոյն թւի յուլիս ամսում Թիւրքաց զօրաբաժինը և տասնեակ հազար քիւրդ հրոսակներ շէյխ Ջալալէդդինի և շէյխ Իբադուլլահի առաջնորդութեամբ, օգտվելով ռուս բերդապահ պահակների սակաւութիւնից, գրոհ տուին Բայազիդի վրա, պաշարեցին նրան և իրանց գազանային կատաղութեան մնացորդը թափեցին քաղաքի անպաշտպան հայ ազգաբնակութեան վրա… Առաջ բերին մի սարսափելի կոտորած, թալան ու աւեր… («Յիշողութիւններ» Բաշբերունու, «Լումայ», 1904 թ.)։

Այդ մարդկային սպանդանոցի ամբողջ պատկերը, լուսանկարչական ճշգրտութեամբ, նկարագրել է անգլիական «Թայմս» թերթի յատուկ թղթակից և Թիւրքիայի շահերի ջերմ պաշտպան Նորման, որ առաջին անգամ հեռաւոր Հնդկաստանից ոտք կոխելով արեան հովիտը՝ դեռ ևս անծանօթ էր Թիւրքիայի գազանաբարոյ հակումներին…

Նորման, կոտորածի անմիջական տպաւորութեան տակ, չի թագցնում խոստովանել, որ «կատարելապէս անկարելի է մարդկային լեզուին յատուկ բառերով տալ գաղափար Ասիական Թիւրքիայի վարչական անլուր չարագործութիւնների մասին… Ես տեսայ, որ հնդկական ամենայիրժ ռաջան, Թիւրք փաշաների մեծամասնութեան համեմատութեամբ, կարող է անմեղութեան տիպար հանդիսանալ…»։

Ապա անցնում է կոտորածի մանրամասնութեան։ Բայազիդում մնացած 165 քրիստոնեայ ընտանիքներ ենթարկվեցին մարդագայլերի յօշոտման…

Չը խնայեցին նոյնիսկ անզօր կանանց ու մանուկներին։ Այլանդակված դիակների կոյտերը շաբաթներով մնացին փողոցներում և տներում ընկած, անթաղ ու անվայել դիրքերով…

Բայց այդ դեռ բաւական չէ։ Իսմայիլ փաշայի ձիաւոր հրոսակները բաժանվելով բազմաթիւ խմբերի՝ ցրվեցին Ալաշկերտի դաշտավայրը և սկսեցին աւերել այնտեղ եղած գիւղերը։ Լաւ էր, որ 3000-ից աւելի հայեր կարողացան ռուս զօրքի պաշտպանութեան տակ անվնաս հասնել ռուսաց պետութեան սահմանները…

Բագրևանդ շրջանի ամբողջ տարածութեան վրա արիւնածարաւ հրոսակներն անխնայ մորթոտում էին անպաշտպան մարդկանց, բռնաբարում կանանց և լլկում անմեղ մանկանց։ Հրի ճարակ դարձան բազմաթիւ գիւղեր, որից քշվեցին անասունների հօտեր ու նախիրներ…

Նորման բերում է մէկը միւսից աւելի սրտազդեցիկ, մէկը միւսից սարսափելի դէպքեր…

«Գրիչս անզօր է պատկերացնել,—բացագանչում է «Թայմզի» թղթակիցը,—դաժան բռնակալների անծայր սանձարձակութիւնը, գազանային անզուսպ կիրքը և աներևակայելի ու քստմնելի մեղսագործութիւնը… Օսմանեան պետութիւնը,—շարունակում է նախկին Թիւրքասէր անգլիացին,—դրահաւորեց սրիկաների ու հրոսակների վայրագ խուժանը, նախապէս գիտենալով որ Հայաստանում պէտք է առաջ գայ մասսայական կոտորած»…

«Անձամբ ծանօթանալով իրերի դրութեան հետ,—եզրափակում է Նորման,—ես հարկադրված եմ հրաժարվել բոլոր Թիւրքասիրական ցնորքներից և այժմ պատրաստ եմ ձայնակցել Ֆրիդմանին, թէ «Անգլիայի համար առաւել լաւ է կորցնել արևմտեան հնդկական կալուածները, քան թոյլ տալ իր զաւակներից որևէ մէկին ձեռք բարձրացնել Թիւրք վարչութեան պաշտպանութեան համար» (Բաշբերունու «Յիշողութիւններ»)։

Մարգարէական խօսքե՜ր, որոնց բուն իմաստը միայն 37 տարուց յետոյ հասկանալի դարձաւ «միջազգային քաղաքագէտներին»…

⁂

Մեծ Ռուսաստանի քաջամարտ բանակը չորրորդ անգամ մտնելով Թիւրքաց Հայաստան՝ պատրաստվում է վերջին մահաբեր հարուածը հասցնել արիւնռուշտ Հիդրային…

Պէտք է խորտակվեն հայ ժողովրդի գերութեան կուռ շղթաները… Փրկութեան զանգի հնչաքանչ ղօղանջն արդէն աւետում է նահատակ ժողովրդին նոր կեանքի արեւածագը…

Ազատութեան ըմբոստ ոգին թևատարած սաւառնում է արեան հովտի վրայով…

Մ. Ղազարեան

ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆԱԽ ՔԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

(Սեփ. թղթակցից)

Բիթլիս, 12 հոկտ.

Համաեւրոպական պատերազմը սկսվելու հէնց յաջորդ օրվանից՝ Թիւրքիայում սիստեմատիկ կերպով ծայր տուեց մի չը տեսնված ռուսատեաց քաղաքականութիւն։ Սկսեց Կ. Պոլսի գերմանական դեսպանատանը թխված՝ «Օսմանեան Հեռագրական Գործակալութեան» պօչաւոր ստերի նախերգանքը, թէ ինչպէս, դիցուք, ռուսները իրանց կովկասեան սահմանապահ բոլոր պօստերը գլխելով այրել և հետ են փախել. թէ ինչպէս կովկասեան ռուսները բոլորն էլ Ռուսաստանի խորքերն են փախչում. թէ ինչպէս Լեհաստանում, Ֆինլանդիայում ապստամբութեան ըմբոստ դրօշակն են պարզել. թէ ինչպէս ապստամբները այսքան զինւորական գնացքներ են խորտակել. այսքան զինանոցներ են գրաւել. թէ ինչպէս պահեստի զօրքերը չեն յանձնըվում, կամ՝ կանոնաւոր զօրքերը զէնքերը վայր են գցում և այլն։

Ի հարկէ ներքին յետին դիտումներով թխված այս բոլոր առասպելները որոշ չափով ծառայում էին իրանց նպատակներին։ Պակաս ֆանտաստիկ գոյներով չէին նկարագրում և պատերազմի հետևանքների մասին։ Մի քանի օրվայ ընթացքում, գերմանացիները արդէն տիրել էին Լոձին, Վարշավային, Մինսկին, Օրլովին, Կիեվին և սպառնում էին Մոսկվային, իսկ Պետրոգրադը արդէն ռմբակոծվում է Ֆինլանդական ծոցից, և նրա գրաւումը օրերի և նոյնիսկ ժամերի գործ է։ Մի խօսքով՝ օսմանեան պաշտօնական հեռագիրներից այնպէս էր դուրս գալիս, որ արդէն Գերմանիան ռուսական լայնածաւալ կայսրութեան կէսին տէր է դառել, և շուտով Ռուսաստանի մեծ կայսրութիւնը պատմութեան և աւանդութիւնների շարքը պէտք է անցնի։

Այդ հողի վրա պակաս գարշահոտութիւն չէր փչում և Թիւրքական հացկատակ մամուլից, որի բարբաջանքներին նայելով՝ Ռուսաստանի ժամը հասել է, որ նա շտապով պատառ-պատառ է լինելու, իսկ իրանց, իբրև ամենաուժեղ գիշատիչ բայղուշի, անպայման պէտք է ամենամեծ պատառը հասնի, այն էլ գիտէք մինչև որտեղ. ոչ աւելի, ոչ պակաս՝ Հիւսիսային Կովկասից էլ այն կողմը (որը արդէն իրանց հաւատակիցների ձեռքն է անցել). մինչև Ռօստով՝ Դոնի վրա։ Այո, Դոնը պէտք է ռուս-Թիւրքական բնական սահման դառնայ։

Շատ բնական է, որ գերմանական դեսպանատանը թխված այդպիսի զիգ-զագաւոր տեղեկութիւնները օրից օր պիտի բարձրացնէին և սիրելի դարձնէին Գերմանիային յաչս ի սփիւռս աշխարհի գտնվող հաւատացեալ մահմեդականների և գրգռէին ամբողջ իսլամութիւնը և ռուսաց հետ ունենալիք ապագայ պատերազմի պարարտ հող պատրաստէին։ Եւ իրօք՝ գերմանական այս կոչերը, գերմանական մեղսալի պրովոկացիան օրից օր նուաճումներ էր կատարում բոլոր մահմեդական աշխարհներում և անվերջ շահագործում առանց այն էլ շատ յետամնաց ու ֆանատիկ մահմեդականութեան տգիտութիւնը։

Թիւրք բաղդախնդիր պաշտօնեաները այն աստիճան առաջ գնացին իրանց զզուելի սանձգութիւնների մէջ, որ մի ժամանակ (գոնէ առ երես) այնքան երկիւղածութեան և յարգանքի արժանացող ռուսահպատակները և նոյնիսկ իրանք ռուսական հիւպատոսները ծաղր ու ծանակի և հայհոյանքի դժբաղդ ականատես եղան։ Բիթլիսում, հրապարակի մէջ, ռուսաց հիւպատոսի կառքին ձիուց վայր բերելով, ռուսական նշանները պոկոտեցին, ոտի տակ տուին, մի լաւ էլ ծեծեցին ու զինուոր տարան։ Իսկ դա արդէն մի չը տեսնված բան էր։ Օրերով և շաբաթներով ռուսաց հիւպատոսարանի հեռագիրները և թղթակցութիւնները պահվում էին և հիւպատոսարանին չէին յանձնում։ Հետևում էին թէ ով է գնում, ով է գալիս հիւպատոսի մօտ և այլն։

Ինչ ասել կուզի, որ նոյն խաղցրած գոյներով նկարագրվում են և ֆրանս-գերմանական պատերազմի տեղեկութիւնները։ Սոսկալի ցնցող տպաւորութիւն էր թողնում մեզ վրա ֆրանսիական, այդ գրաւիչ ազգի մէկը միւսից աւելի յուսահատ ու կործանիչ պարտութիւնը։ Հեռագիրներին նայած՝ ամբողջ Ֆրանսիան այժմս ամենակարող Վիլհէլմի նժոյգի ոտերի տակը դողում է։ Պաշտօնական հեռագիրները հաղորդում էին, որ այս-ինչ ճակատամարտում ֆրանսիացիք կորցրին 300,000 մարդ, մի ուրիշ ճակատամարտում 800,000 մարդ՝ զուտ սպանված։ Եւ վերջապէս Ֆրանսիայի մայրաքաղաք Պարիզը վերցնելու օրը գիտէք թէ ի՛նչ հրավառութիւններ, ի՛նչ խրախճանքներ կատարվեցին Թիւրքիայում... Գուցէ իրականութեան մէջ գերմանացիք բոլորովին էլ ոտք չեն դրել Պարիզ, իսկ մեզանում սեպտեմբերի սկիզբներին Պարիզի առման հանդէսը կատարվեց երիտասարդ Թիւրքերի կողմից՝ չը տեսնված ոգևորութեամբ։

Գերմանական դեսպանատան այս տենդենցիօզ ու անամօթ ստերին հանդուրժել չը կարողանալով, Կ. Պոլսի ֆրանսիական դեսպանը՝ այդ առիթով վէզիրի հետ ունեցած խօսակցութեան ժամանակ ուժեղ բողոքել է՝ «Մենք Գերմանիայո՞ւմ ենք գտնվում թէ Թիւրքիայում»։ Այդ բողոքից յետոյ թէև մի քանի օր ընդհատվեցին «օսմ. գործակալութեան» հեռագիրները, բայց մի քանի օրից յետոյ նորից նոյն դրութիւնը շարունակվեց։ Այդ առիթով Բիթլիսի ռուսաց հիւպատոսարանն էլ առանձին թղթեր կպցրեց հիւպատոսարանի դռանը, ցոյց տալով Թիւրքական հեռագիրների սուտ և միտումնաւոր լինելը։ Բայց որովհետև արգելվեց հիւպատոսարանի դռանը կպցված ամեն տեսակ թղթերի ընթերցումը, ուստի նախկին դրութիւնը նորից շարունակվեց։

Շատ ծիծաղաշարժ են Կովկասի վերաբերմամբ սարքած՝ երիտասարդ-Թիւրքերի յերիւրանքները։ Նոյնիսկ մեզանում կիսապաշտօնապէս յայտարարվեց, որ ռուսները իրանց զիջել են Կարսը, Բաթումը, Կաղզվանը և այլն. դրանով, ի հարկէ, Թիւրքերը անբաւական մնալով, ռուսները որպէս թէ նորից զիջել են Թիւրքիային ամբողջ Անդրկովկասը, իսկ դրանով էլ անբաւական լինելով՝ 8 օր պայմանաժամ տալով ամբողջ Կովկասը (Հիւսիսային Կովկասն էլ հետը) իրանց յանձնելու ուլտիմատում են ներկայացրել. «Հակառակ դէպքում՝ պատերազմը անխուսափելի կը լինի և մեր յաղթական առաջխաղացութիւնը Դոնի առաջ միայն կանգ կառնի, — ասում էին երիտասարդ Թիւրքերը. — աջողութեան համար մենք ունենք հաստատուն առհաւատչեաներ։ Բացի Գերմանիայից և Աւստրիայից, որոնք մեզ մատակարարում են ամենակատարելագործված զէնքեր, ռազմամթերքներ, պատերազմական ուրիշ տեսակ տեխնիկական յարմարութիւններ, ինչպէս նաև հմուտ բժիշկներ, ինժեներներ, զօրապետներ և, այժմ արդէն մեզ հետ է գլուխ բարձրացնելու ամբողջ մահմեդական աշխարհը, ինչպէս օրինակ՝ Պարսկաստանը, Աւղանստանը, Բէլուջիստանը, Խիվան, Ալժիրը, Թունիսը, Եգիպտոսը, Տրիպօլիսը, Հնդկաստանը, ինչպէս նաև Կազանի, Կովկասի մահմեդականները»։

Այս բոլոր յանցաւոր պոռոտախօսութիւնների ժամանակ որքան էլ որ Թիւրքահայը աշխատի գերբնական ոյժ գործ դընել՝ չէզոք, ձեռնպահ մնալու այդ մանկական ծիծաղաշարժ և յաճախ ըկտիութեան հասած յերիւրանքների մէջ, էլի անկարող է։ Մի անգամ տողերիս գրողը այդ մասին խօսում էր Պոլսի Թիւրքական բարձրագոյն լիցէոնն աւարտած երիտասարդ Թիւրքերից մէկի հետ, երբ վերջինս ամենայն ինքնավստահութեամբ պնդում էր, որ «այս անգամվայ պատերազմին ինշալլահ Կովկասը գրաւելուց յետոյ բուն Ռուսաստան պիտի մտնենք» և այլն, ես շատ համբերեցի՝ ուզելով արհամարհել, չը պատասխանել նրան, բայց վերջապէս համբերութիւնից դուրս գալով՝ մի առ մի հերքեցի նրա ասածները, ցոյց տալով որ դրանք բոլորն էլ անիրագործելի երազներ են։ Բացատրեցի նրան ռուսական կայսրութեան մեծութեան, հսկայական ոյժի, էներգիայի, Թիւրքիայի համեմատութեամբ գերակշռող տեխնիկայի կատարելագործութեան, ճանապարհների հաղորդակցութեան և երկաթուղային ցանցերի անսպառ դիւրութիւնների, ռուսական զօրքի տոկունութեան և անձնազոհութեան մասին, վերջապէս թւեցի նրանց առողջապահական պայմանները, սնունդի, հագուստի առաւելութիւնները և այլն։ Բայց՝ յետոյ նկատեցի, որ իմ խօսակիցս ինձնից շատ դժգոհ մնաց և այնուհետև նոյնիսկ իմ բարևս էլ չընդունեց։ Այդ հողի վրա որքան միջադէպեր են ծագում հայերի և մահմեդականների միջև։ Որքան անգամ ռուսաց հասցէին ուղղված անպատկառ և փողոցային լուտանքների ժամանակ հայը իր աւանդական համբերութիւնից դուրս գալով, իր տրամաբանական և ըմբոստ առարկութիւններից յետոյ, գրեթէ նոյն լուտանքները Թիւրքերի երեսին է շպրտում, որ ի հարկէ այնքան էլ էժան չի նստում «զօվլամ խայինի» (պետութեան անհաւատարիմ) հայի վրա... Բայց որքան էլ թանգ նստի, հոգ չէ Թիւրքահայի համար։ Նրա առջև «խաչապաշտ ռուսի» հասցէին ու կրօնին լուտանք ուղղելը անարձագանք չէ կարող մնալ. դա նոյն է, թէ նրա ամենանուրբ ջղերին դիպչել, դա նրա ամենաբարձր սրբութիւնները պղծել կը նշանակէ։ Ռուսասիրական հոգին, ռուսների նկատմամբ տածված պաշտամունքը Թիւրքահայի սրտում այնքան բարձր է ու վսեմ, որ այսօր Թիւրքահայ ամենախուլ գիւղերում անգամ դուք կը գտնէք ռուսաց Կայսեր ու Կայսրուհու պատկերները, որոնց շատ պճնաւորութեամբ ձեռք ձգելով՝ պատերից կախ են արել և գուրգուրում են նրանց վրա։ Ես ինքս անձամբ ականատես եմ եղել, թէ ինչպէս շաբաթ երեկոները (կիրակամտին) Կայսեր պատկերի առաջ ձէթէ ճրագ են վառել ամբողջ գիշերը։ Ինչ անբարեյաջող հանգամանքներ կուզեն թող լինեն, Թիւրքահայի խորին սէրն ու պաշտամունքը դէպի իր «քեռի» ռուսը չի թուլանայ...

Թիւրքերի վերաբերմունքը դէպի ռուսները՝ միանգամայն հակառակն է։ Ամենաինտելիգենտ Թիւրքից սկսած մինչ ամենավերջին համալը՝ ոչ մի քրիստոնեայ պետութեան դէմ այնքան անզուսպ վրէժխնդրական ոգով չեն լցված, որքան ռուսի կամ, ինչպէս ջղայնացած հնչում են, «Դինսիզ քեաֆիր Մոսկովի» դէմ։

Գալով գերմանական օդային նաւատորմով Լօնդոնի ռմբակոծութեան մասին տարածված լուրերին, որ ձեզանում միայն այժմս են նորութիւն դառնում, մեզանում 2½ ամսվայ հնութիւն են։ Այո, մենք այդ 2½ ամիս առաջ ենք լսել։

Ար. Փիւրջեան

ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐԻ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՆԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Երբ 1453 թ. Կ. Պոլիսը Թիւրքերն առան, դա ինչպէս արևմտեան, նոյնպէս և արևելեան քրիստոնեաների վրա շատ ցնցող տպաւորութիւն գործեց։ Կ. Պոլսի առումը համարվում էր որպէս կիսալուսնի յաղթանակը խաչի վրա, ուստի և ոչ մի քրիստոնեայ ազգ չէր կարողանում հաշտ աչքով նայել այդ իրողութեան վրա։

Ժամանակակից հայ պատմիչ Առաքել Բաղիշեցին, որ այս անցքին նուիրել է մի ողբ, դրա մէջ գուշակում է Թիւրքիայի կործանումը ֆրանսիացիների ձեռքով։

Ահա նրա խօսքերը՝

Յորժամ ֆրանկաց ազգն շարժին,
Կամօք անմահ Թագաւորին,
Որ և յառաջ գայս ասացին
Սուրբ հայրապետքն աստուածային,
Որ սուրբ Հոգւովն խօսեցին
Եւ զգալոցն պատմէին,
Վասն գալոյ ֆրանկ ազգին
Ի ժամանակս յաւուրն յետին։
Ամենեքեան առհասարակ
Արեւական ազգն շարժին,
Յորդորելով զամենեսին
Աստուածառաք պատերազմին։
Գային ծովով և ցամաքով,
Որպէս զաւազ, որ ոչ թուին,
Որպէս առիւծ մռնչելով.
Ի յաղագին համարձակին։
Նախ զՍտամբոլ քաղաքն առնուն,
Ամենազօր կամօք Փրկչին,
Ապա յառաջ համարձակին,
Եւ ի բոլոր աշխարհն տիրին։

Յ. Վարդանեան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

6 նոյեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Վիսլայի ձախ ափին ռազմական գործողութիւնները վերջին օրերում զարգացան երկու շրջանում. Վիսլայի և Վարթայի միջև և Չենստոխով-Կրակով ռազմագծում։ Կռիւները տեղի են ունենում մեծ եռանդով ու ունեն առաւելապէս հանդիպման բնոյթ։

Արևելեան Պրուսիայում մեր զօրքերը յարձակման են ենթարկում Անգերբուրգից դէպի արևելք գտնվող չափազանց ամուր դիրքերը։ Գերմանական խրամատների առաջ կան երեք կարգ մաւթուլէ խոչեր, ջրով լի փոսեր ու ցանցեր։ Մենք ձեռք ձգեցինք մի քանի դիրքեր Անգերբուրգից 7 վերստ հեռու դէպի արևելք և Բուվէնլօյի և Տիրկլօյի լճերի միջի անցքը, գրաւելով 19 թնդանօթ, 6 գնդացիր, պրօժեկտոր և մի քանի հարիւր գերիներ։

Արևմտեան Գալիցիայում մեր առաջխաղացումը շարունակվում է։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

6 նոյեմբերի

ՊԱՐԻԶ. — Պաշտօնական երեկոյեան հաղորդագրութիւնը յայտնում է, որ անցեալ օրը շարունակվեց անընդհատ ուժեղ թնդանօթաձգութիւն։ Սէն-Միէլի շրջանում գերմանացիք պայթեցրել են Շավօնկուրի արևմտեան մասը։

Պաշտօնական հաղորդագրութիւն։ Ուազի և Էն գետի միջև ռազմական գործողութիւնները Տրասիլևալի շուրջ վերջացան մեզ համար նպաստաւոր կերպով. մենք տիրացանք այդ գիւղին արդէն մի քանի օր առաջ, և 3 օր առաջ գերմանացիք փորձեցին նորից ձեռք ձգել այն, գրաւեցին մեր խրամատների առաջին գիծը, ըստ որում հասան մինչև գիւղի կէսին, սակայն մեր ալժիրեան զօրքերի կտրուկ հակայարձակումը ցիրուցան արեց թշնամուն, պատճառելով նրան խոշոր կորուստներ։ Արդիւնքում մենք պահեցինք մեր դիրքերը։

ԱՒՍՏՐՕ-ՍԵՐԲԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

6 նոյեմբերի

ՆԻՇ. — Լոյս նոյեմբերի 4-ի գիշերը սերբիական պաշտպանողական զօրամասերը նահանջեցին դէպի Վալյեվօ-Օբրեցա ռազմագիծը, բոլորովին դուրս գալով Վալյեվօյից։ Թշնամին փորձեց կանգնեցնել մեր շարժումը, բայց նրա ջանքերը ապարդիւն եղան մեր թնդանօթների շնորհիւ, որոնց կրակը ցիրուցան արեց թշնամու ամբողջ զօրամասեր։ Դրագէվաց-Կոնատիցա-Լէյկովաց ռազմագծում գործող թշնամու զօրամասերը մանաւանդ տուժեցին սերբերի թնդանօթային կրակից։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

6 նոյեմբերի

ԼՕՆԴՕՆ. — 350 միլիօն ֆունտի պատերազմական փոխառութիւնն արդէն ապահոված է։ Այսօր գնորդների հոծ բազմութիւն լցրել էր անգլիական բանկը։

«Թայմսը» առաջնորդող՝ «Անգլիան և նրա ռուս դաշնակիցը» խորագիրը կրող յօդուածում ընդգծում է Ռուսաստանի ահագին խնդիրը ներկայ պատերազմում, նաև այն ծառայութիւնների նշանակութիւնը, որ ցոյց է տալիս Ռուսաստանը իր դաշնակիցներին։ «Անգլիան և Ռուսաստանը, — ասում է լրագիրը, — միացել են եւրոպական գործին և իրաւունքին օգնութեան հասնելու, և նրանք պէտք է հոգան ապագայում ևս ներկայ բարեկամութիւնը ամրապնդելու մասին»։ Լրագիրը նկատում է, որ Անգլիայում եռանդով գործում են թշնամի գործակալութիւններ, որոնք աշխատում են ստուեր ձգել անգլօ-ռուսական բարեկամութեան վրա, բայց նրանք, ի հարկէ, չեն հասնի իրանց նպատակին, ճիշդ այնպէս, ինչպէս լիակատար անաջողութեան կը հանդիպեն այն ջանքերը, որոնք կատարվում են այդ ուղղութեամբ Ռուսաստանի հանդէպ, որովհետև ռուս ժողովուրդը մեծահոգի է և չի ունկնդրի այդ տեսակ զրպարտութեան. վերջում «Թայմսը» ասում է. «Պատերազմի սկզբից մենք պատւով կատարում ենք մեր գործը և ուրախ ենք տեսնելու, որ ռուսական մամուլը ընդունում է այդ իրողութիւնը, նաև այն, որ մեր և Ռուսաստանի միացեալ աշխատանքի նպատակն է ջախջախել պրուսական միլիտարիզմը և հեգէմօնիան»։

Պատասխանելով ուղղված հարցին համայնքների պալատում, Չերչիլը յայտնեց, որ բրիտանական նաւատորմում պատերազմի սկզբից սպանվել և վիրաւորվել են 259 օֆիցեր, անհետ կորել են 5, նաւաստիներից սպանվել են 3455, վիրաւորվել են 428, անհետ կորել է 1։ Այս թւում չեն մտնում թագաւորական ծովային զօրամասից պակասող 1000 հոգին, նաև «Գուդգօպ» յածանաւի կազմը, որ մօտաւորապէս 857 հոգուց էր բաղկացած։ Չեն մտած նաև Հօլանդիայում բռնված նաւաստիները։

ՍՕՖԻԱ. — Ազգային միութեան վարչութիւնը հրատարակեց մի դեկլարացիա յայտարարութեամբ, թէ միայն կառավարութիւնը կարող է դատաւոր լինել արդի դրութեան և ընտրել այն րօպէն, երբ յարմար կը լինի գրաւել Մակեդոնիան։ Այդ տեսակէտից՝ կառավարութիւնը չը պէտք է ենթարկվի ոչ ժողովների և ոչ էլ ցոյցերի ազդեցութեան։

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Զինուորական ծառայութեան գործերի վարչութեան կողմից. 1914 թ. 1-ին կարգի երկրապահ զինուորներին ծառայութեան կոչելու ժամանակ, պետութեան բարձր ու միջին կրթարաններում ուսանող զինուորացուները օգտվում են արտօնութեամբ «Правитель. Вѣстникъ»-ի այս տարվայ օգոստոսի 6-ին, № 173-ում, վարչութեանս տուած բացատրութեան մէջ պարզված հիմունքներով, այսինքն այդ անձինք բնաւ չը պէտք է կանչվեն զօրահանութեան ժամանակ։ Ընդամին հնարաւոր է ընդունված՝ տարածել այդ արտօնութիւնը նաև այն երկրապահ զինուորացուների վրա, որոնք 1914 թւին ստացել են վկայաթղթեր՝ շարունակելու կայսերական համալսարանների դասընթացքը, որոնք սակայն դեռ հնարաւորութիւն չունենն բռնել պետական քննութիւն։ Այդպիսիներին զօրահանութեան ժամանակ միջոց կը տրվի մինչև 1915 թ. պետական քննութիւնների աշնան նստաշրջանի աւարտումը։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ. — Բեռլինից հաղորդում են, որ հակառակ կնքված պայմանագրի ոչ մի ռուսահպատակի, նոյնիսկ կանանց, թոյլ չէ տրվում այլևս մեկնել Գերմանիայից։

(Սրնկտյեան հաղորդագրութիւն)

7 նոյեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — «Нов. Вр.»-ին հեռագրում են. «Վերջին օրերս Բօլգարիայի և Ռումինիայի միջև տեղի են ունեցել նշանաւոր բանակցութիւններ։ Բօլգարիան յայտարարել է, որ Ռումինիայի հրապարակ գալը առաջ չի բերի թշնամական քայլ Բօլգարիայի կողմից և, միևնոյն ժամանակ, Բօլգարիան ոչ մի կօմպենսացիա էլ չէ պահանջում։ Այդ յայտարարութիւնը մեծ տպաւորութիւն է առաջ բերել Բուխարեստում, սակայն, միևնոյն ժամանակ, առաջացրել է և մասնակի անվստահութիւն։ Ռուսաստանի, Բօլգարիայի և Ռումինիայի դիպլօմատների միջև տեղի ունեցած մտքերի փոխանակութիւնից յետոյ պարզվել է այն, որ Պետրոգրադի կաբինէտը միանգամայն որոշ կերպով երաշխաւորում է, որ Ռումինիայի հրապարակ գալու դէպքում Բօլգարիան նրա դէմ թշնամական գործողութիւն չի սկսի»։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

6 նոյեմբերի

ԹԵՀՐԱՆ. — Վախճանվեց յայտնի Սաթթար-խանը։

ԼՕՆԴՕՆ. — Կայացաւ լօրդ Րօբէրտսի հանդիսաւոր թաղումը։ Ս. Պօղոսի տաճարում պատարագին ներկայ էին թագաւորը, կառավարութեան անդամները և լօրդ Կիտչեները։ Լօրդ Րօբէրտսի դամբարանը գտնվում է ծովակալ Նէլսօնի դամբարանի կողքին։

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Դատաստանական պալատը դատապարտեց «Новая рабочая газета»-ի խմբագիր Օգօրօդնիկօվին՝ պատգամաւոր Սկօբելէվի յօդուածը Լենայի դէպքերի մասին տպելու համար՝ մի տարով բանտի։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ «Н. Вр.»-ին հաղորդում են Կիեվից, որ ռուսաց կառավարութիւնը 100,000 ր. է յատկացրել նախկին աւստրիական պաշտօնեաների ընտանիքների և Լվօվ քաղաքի տնանկ ազգաբնակութեան օգտին։

◆ Տասն շաբաթվայ ընթացքում Գալիցիայում ուղղափառութեան գիրկն են անցել 30,000 տեղացի բնակիչներ, որոնց թւում 20 ունիատ քահանայ։

◆ Շվէդական խաղաղութեան ընկերութիւնը դիմեց կառավարութեանը, խնդրելով վերջ դնել Սվէն-Գէդինի գերմանասէր ագիտացիային։

◆ Բորդօյից հաղորդում են, որ Վիլհէլմ կայսրը, ռուսների՝ Արևելեան Պրուսիա մտնելուց յետոյ, չորրորդ անգամ դիմեց բէլգիական Ալբէրտ թագաւորին, առաջարկելով հաշտութիւն կնքել։ Թագաւորը առաջարկութիւնը մերժեց արհամարհանքով և, զօրքի գլուխն անցած, յարձակման դիմեց գերման զօրքերի վրա։

◆ «Н. Вр.»-ի ասելով, զինուորական-եկամտային հարկին ենթարկվելու են միմիայն այն ժուռնալիստները, որոնք ստանում են որոշ ռոճիկ իրանց աշխատանքի համար։ Տպագրական խօսքի այլ տեսակ աշխատողները այդ հարկից ազատ են լինելու։

◆ «Н. Вр.»-ն գրում է. «Թող վերանան կասկածները։ Բարձրագոյն կամքի նոր կտրուկ պնդումը շեշտվում է այն հեռագրում, որ արժանացաւ ստանալ Մոսկվայի քաղաքագլխի պաշտօնակատարը։ Ռուսաստանը հաշտութիւն չի կնքի, մինչև որ չընկճվի վերջնականապէս թշնամին և մինչև որ չիրականանան մեր պատմական խնդիրները։ Բարձրագոյն կամքի պարզ ու հաստատուն արտայայտութեան դիմաց պէտք է լռեն բոլոր չարամիտ լուրերը՝ կոմպրոմիսների հնարաւորութեան մասին, որովհետև այսուհետև նրանք պէտք է համարվեն յանցաւոր»։

◆ «Арм. Вѣстникъ»-ում տպված է. «Մենք գտնվում ենք նոր ընդհարումների նախօրեակին։ Այդ՝ կայզէրի վերջին փորձն է, որ իր բոլոր լաւ ոյժերը ուղղել է դէպի արևելք։ Շատ հաւանական է, որ առաջիկայ կռիւը կը լինի վճռական՝ ամբողջ պատերազմի համար»։

◆ Հռոմի պապը դիմել է իտալական կաթօլիկներին՝ յորդորելով պահպանել չէզոքութիւն։

◆ Լօնդօնից հեռագրում են, որ կապվել է իտալական-յունական համաձայնութիւն։ Իտալիան ճանաչում է յոյների իրաւունքը Եպիրոսին տիրանալու, իսկ Յունաստանը իր կողմից ընդունում է Իտալիայի իրաւունքը Վալօնի վրա։

◆ Գերմանական սահմանում սպանվել է շտաբս-կապիտան Բօրիս Գէօրգեան Հախվերդեան։

ԳԵՐԻ ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԸ

«Нов. Вр.»-ն իր վերջին համարներից մէկում այսպէս է նկարագրում գերի գերմանացիներին.

«Այդ բազմաթիւ ամբոխի արտաքինը ընդհանուր զարմանք է առաջացնում ոչ միայն խառը ձևի հագուստով, այլև մի ձև չը լինելու պատճառով։ Զինուորների վրա ոչ մի տաք հագուստ չը կայ։ Կարծես թէ գերմանացիները մոռացել են, որ աշնանից յետոյ ձմեռ է գալիս, այլ ոչ ամառ։ Զինուորները գլխներին կարգին գլխարկներ չունեն, եղած սաղաւարտներն էլ մի բանի նման չեն։ Պատկերը լրացնում է նրանց ոտնամանը։ Զինուորներից շատերը մի ոտին հագած ունեն հեծելազօրի զինուորի խթանաւոր կօշիկ, երկրորդ ոտին՝ հասարակ կօշիկ առանց խթանի, մէկը դեղին կաշուց, միւսը սև։ Իրանք այն տպաւորութիւնն են թողնում, որ կարծես հանել են վիրաւորների կամ սպանվածների ոտքերից, և այժմ կատարեալ անպէտքութեան են հասցված։

«Այդ ողորմելի տեսքին միանգամայն համապատասխանում է պատերազմական գերիների բնաւորութիւնը, որ զարմացնում է զինուորական կրթութեան և զինուորական և քաղաքացիական պատւի կատարեալ բացակայութեամբ։ Զինուորները կամ լուռ են ու տխուր, կամ ամբարտաւան են ծայրայեղ աստիճանի։ Նրանք վերցնում են իրանց սաղաւարտները և անթագցնելի ցինիզմով դիմում անցորդներին, որպէսզի մի քանի կօպէկ առնեն նրանցից ծխախոտի համար»։

ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Աւստրիական հասարակական կարծիքը Ռուսաստանին համարում է Աւստրիայի և Գերմանիայի հետ կռւող պետութիւններից ամենաուժեղ և գլխաւոր հակառակորդը։ Աւստրիական մամուլը ընդգծում է, որ ռուս զօրքերին յաղթելով միայն կարելի կը լինի ապահովել հաստատ խաղաղութիւնը։ Նոյն լրագիրները, յամենայն դէպս, խոստովանում են, որ այդ յաղթութիւն տանելը այնքան էլ հեշտ բան չէ։ Աւստրիացիները յոյս չունեն այս պատերազմում որոշ չափով թուլացնել Ռուսաստանի ոյժը։

Աւստրիական մի հեղինակաւոր գէներալ այն միտքն է յայտնում, որ պատերազմը կը վերջանայ 1916 թւին, որովհետև այդ ժամանակ միայն կռւող կողմերը կը սպառեն իրանց ոյժերը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—o—

ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ

Ստացանք Հաղբատից՝ Մարտիրոս Թանգիլեանից 5 րուբլի։ Մինչև օրս ստացվածների հետ միասին (տես «Մշակ» № 252) ունենք ստացած ընդամենը 108 րուբլի։

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂ ԿԱՄԱՒՈՐՆԵՐ

Նոր-Նախիջևան, 28 հոկտեմբերի

Երէկ երեկոյեան երկաթուղու գնացքով Մոսկվայից Ռոստովի կայարան ժամանեց հայ ուսանողներից կազմված կամաւորների մի խումբ։

Չը նայելով այդ մասին միայն մի քանի անհատներ գիտէին, բայց և այնպէս դիմաւորելու եկել էր մի շատ մեծ բազմութիւն, բաղկացած նոր-նախիջևանցիներից, կովկասցիներից և Թիւրքահայերից *)։

Երբ գնացքը կանգ առաւ և երբ վագոնների դռան երևացին ուսանողական համազգեստները և աչքի ընկնող նրանց գլխի մօրթօնները, դղրդացին սրտերի խորքից բղխած ուրախական ուռաները, որին հետևեց արդէն ազգային հիմն դարձած՝ Նալբանդեանի «Մեր հայրենիքը», մի երգ, աւելի քան ներդաշնակող՝ րոպէի վեհութեան։

Իր քաջ որդոց սուրբ արիւնով
Պիտի լինի ազատված։

Երգը երգեց ամբողջ հասարակութիւնը գլխաբաց, ջերմեռանդութեամբ և ոգևորութեամբ։

Տեսարանը որքան յուզիչ ու սրտաշարժ էր, նոյնքան և աներևակայելի։

Աներևակայելի՝ վասն զի ո՞վ կարող էր երազել, թէ պէտք է գայ մի գեղեցիկ օր, երբ Նախիջևանի և Ռոստովի հայ ինտելիգենտ հասարակութիւնը կայարանում ծաղիկներով դիմաւորի հայ կամաւորների, որոնք գնում են հայրենիքի կոչին արձագանք տալու, որոնք գնում են Հայաստանը իր դարաւոր թշնամու ձեռքից ազատելու սուրբ գործին աջակցելու։ Սրանից աւելին...

Ո՞վ կարող էր երևակայել, որ այդ կարիճները հայ ուսանողները պիտի լինէին։

Միթէ դեռ երէկ չէր, որ մենք ամեն կողմից թէ բերանացի և թէ գրաւոր տրտունջներ էինք լսում նրանց մասին.

— Թէ հայ ուսանողութիւնը, լուրջ գիտութիւնը, բազմակողմանի զարգացումը թողած՝ ընկած է շռայլ, ցոփ և անվայել կենցաղավարութեան մէջ։

— Թէ հայրենիքը նրանց ուղարկել է լոյսի ճառագայթը բերելու և իրան լուսաւորելու, իսկ նրանք իրանց հետ բերում են օտարամոլութիւն, շիկ, արտաքին էֆֆեկտ...

— Թէ ծնողները իրանց բերանի պատառը կտրելով, իրանց զաւակներին մայրաքաղաքներ ուսումի ուղարկելով, սարսափելի հիասթափվում են, տեսնելով որ զաւակը վերադառնալուց յետոյ, ոչ միայն մայրենի գիւղը և հասարակութիւնն է արհամարհում, այլ և ծնողներին է ուրանում...

— Թէ նա արհամարհում է իր լեզուն, գրականութիւնը, գեղարուեստը, հասարակական գործը, թէ նրա աչքում ամենից առաջին տեղը բռնում է անձնական բարեկեցութիւնը, ոսկին, կեանքի շռայլ հաճոյքները, կարիերան...

Բայց չէ որ առաջ այդպէս չէր։

Չէ որ եղել է մի ոսկի ժամանակ, երբ մենք ունեցել ենք դորպատեան ուսանողութիւն, երբ այդ ուսանողութիւնը մեր կուլտուրական կեանքի մէջ ռեֆորմատորի դեր է կատարել։

Չէ որ եղել է մի շրջան, երբ 80-ական թւականների ուսանողութիւնը ամենափայլուն տեղ էր գրաւում մեր լրագրութեան մէջ, արձագանք տալով մեր բոլոր հասարակական խնդիրներին... Նրանք ամառները հայրենիք գալով՝ ամեն տեղ թարմութիւն և ոգևորութիւն էին սփռում։

Յետոյ եկան ժամանակներ, երբ հայ ուսանողութիւնը տոգորվեց անօրինակ անտարբերութեամբ դէպի ամեն ինչ՝ որ լաւն էր և գեղեցիկը, երբ հասարակութիւնը իրաւամբ երես էր շրջում նրանից։

Յետոյ եկան 905—6—7 թւականները, երբ հայ ուսանողութիւնը մարդկային պատկերը առեղծող ի՞նչ տիպարներ ասես որ չը տուեց մեզ...

Եւ Աստուած գիտէ թէ այլասերման այդ ճանապարհը ո՞ւր պիտի տանէր նրան, եթէ յանկարծ վրա չը հասնէր սթափման րոպէն,

Կրկին մեր յոյսերը նորոգվեցին, կրկին հասարակութիւնը սկսեց քիչ առ քիչ հաշտվել նրա հետ։

Եկան ահա և վերջին օրերը։

Երևի ճակատագիրը նրա համար պահել էր բոլոր ժամանակների լաւերին գերազանցելու վեհ կոչումը։

Հնչեց մարտեան փողը։

Մոխիրների և աւերակների տակից լըսվեց մայր Հայաստանի հառաչանքների կոչը, թնդաց հայ երիտասարդութեան սիրտը և ամեն տեղից պանդուխտ հայազգին դիմեց դէպի իր սիրուն հայրենիք. Թնդաց և հայ ուսանողութեան սիրտը, և նա, արձագանք տալով այդ կոչին, վճռեց ոտնատակ տալ մայրաքաղաքների բոլոր վայելքները, կեանքի բոլոր հրապոյրները, ապագայի փայլուն յոյսերը։

Նա մոռացաւ ծնող, բարեկամ, մոռացաւ ամեն ինչ, մոռացաւ և իր անձը։

Թող օրհնվի այն մարտահրաւէր ուղին, որ նա բռնեց. Թող օրհնվի այն գործը, որի համար նա գնաց իր անձը նուիրելու։

Հայաստանը ծարաւի է իր զաւակների արեան։

Սակայն ամեն ծարաւ և քաղց վերջ ունի. տայ Աստուած, որ սա վերջինը լինի։

Ազգի պատմական կեանքում լինում են րոպէներ, երբ նա հրաշքներ է գործում։

Օն, յիշեցէք մեր ոգելից բանաստեղծի խօսքերը.

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի, որ իր ազգի
Ազատութեան կը զոհվի։

Ալէքս. Աբէլեան

ՀԱՅ ՎԻՐԱՒՈՐՆԵՐ

Մոսկվայում վիրաւոր պառկած է պրապօրշչիկ Ղազարոս Կարապետեան Գենիմեան։

Թիֆլիսի Ալէքսանդրեան հիւանդանոցում (№ 3) պառկած է պօդպօրուչիկ Ալէք. Գէորգեան Արիստակէսեան, շըրջանային դատարանի հիւանդանոցում՝ Վաղարշակ Օհանեան Պապայեանց։ Իսկ Թիֆլիսի Հայկական հիւանդանոցում գտնըվում են հետևեալ հայ վիրաւոր զինուորները, որոնք վէրք են ստացել Քեօփրիքեօյի մօտ. 1) Տէր-Գէորգեան Արտէմ, 2) Մարտիրոսեան Մկրտիչ, 3) Սարիբէգեան Իվան, 4) Ասլախանեան Իվան, 5) Դեմեանով Սիմէօն, 6) Ստեփանեան Գայկան, 7) Աւետիսեան Աւետիս, 8) Դաւթեան Առաքել, 9) Սարգսեան Շմաւոն, 10) Կարապետեան Մանուկ, 11) Սիրիկեան Իվան, 12) Տօնոյեան Սարգիս, 13) Գասպարեան Սարգիս, 14) Յակոբեան Սարգիս, 15) Մովսէսեան Համբարձում, 16) Մանուկեան Վարդան, 17) Յովհաննիսեան Յովհաննէս, 18) Մխիթարեան Պօղոս, 19) Անանեան Ստեփան, 20) Տէր-Ալէքսանդրեան Աղամ, 21) Տէր-Սարգսեան Սիմէօն։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Խաբրիկներ Զաքաթալայից

Զաքաթալա, 3 նոյեմբերի

Երէկ, ամսիս 2-ին, տեղիս հայոց ս. Գէորգ եկեղեցում պատարագից յետոյ պատարագիչ քահանան կարդաց Վեհ. Կաթողիկոսի կոնդակը՝ պատերազմից վնասվածների ընտանիքներին, վիրաւորներին լազարէթներում պահելու օգնելու, այլև զանազան կարիքները հոգալու համար։

Եկեղեցին լի էր երկսեռ հոծ բազմութեամբ։ Կոնդակը խորը տպաւորութիւն գործեց։ Անյապաղ կը սկսվի հանգանակութիւն մեր ժողովրդի մէջ։ Յոյս ունենք, որ տեղիս թէ ունևոր և թէ նոյնիսկ ոչ-ունևոր դասակարգը իր առատ նուիրատուութեամբ իր եղբայրական, մարդասիրական պարտքը պիտի կատարէ հանդէպ կռւի դաշտում գտնվող մեր եղբայրակիցների ու արիւնակիցների, նրանց օգնութեան կարօտ ընտանիքների ու ընդհանուր հայրենիքի...

Ապա՝ «Մշակի» տեղիս թղթակցի նախաձեռնութեամբ եկեղեցում կատարվեց հոգեհանգիստ մեր ազգի ականաւոր գործիչների մահվան տարելիցի առիթով, այն է Ալ. Քալանթարի, Ս. Զաւարեանի, Կ. Խատիսեանի, Յ. Տէր-Մարկոսեանի, այլև Սուքիաս արքեպիսկոպոս Պարգևեանի և Դումանի յիշատակին։ Քահանան զգացված կերպով դրուատեց բոլորի ազգօգուտ գործունէութիւնը և ցաւ յայտնեց, որ ներկայումս այդ նշանաւոր գործիչները չը կան։

Երեկոյեան տեղական ռուս ինտելիգենցիան մի ներկայացում տուեց հայոց դպրոցի դահլիճում յօգուտ Թիֆլիսի դատարանական լազարէթի։ Խաղացվեց А. Д. Лавровъ-ի «Однимъ грѣхомъ болѣе» դրաման։

Արդիւնքը մնաց 108 ր. 67 կ.։

Սօյզադէ

Վիրաւոր զինւորները Բագւում

Բագու, 4 նոյեմբերի

Դեռ երէկ երեկոյեան ժամը 4-ից սկսած, տեղիս երկաթուղային կայարանն էր հաւաքվել մեծ թւով խառն ժողովուրդ, որ անհամբեր սպասում էր ռուս-թիւրքական պատերազմում մեր վիրաւորված զինւորներին, որոնք այդ նոյն օրը պէտք է ժամանէին տեղս։

Եւ այսպէս, հաւաքված ժողովուրդը սպասեց վիրաւոր զինւորների գալստեան մինչև գիշերվայ ժամը 12-ը, բայց նրանք չը կային։

Ու այսօր, լոյսը դեռ չը բացված, երկաթուղային կայարաններում նոյնպէս մեծ թւով հասարակութիւն էր հաւաքվել, որի մէկ ծայրը գտնվում էր երկաթուղային կայարանում, իսկ միւս ծայրը հասնում էր ամբողջ Րօմանօվսկի պրօսպէկտը։

Առաւօտեան ժամը 10-ին, երբ ժամանեց երկաթուղային գնացքը և երբ իմացվեց, որ եկողները վիրաւոր զինւորներ են, հասարակութեան ուռաներին վերջ չը կար։

Այնուհետև աւտօմօբիլներով նրանց փոխադրեցին դէպի լազարէթները։

Մօտ 600 վիրաւոր զինւորների մէջ շատ քչերն էին, որ փոքր ինչ ծանր վէրք ունէին, մնացածները թեթև են, ոտքից, ձեռքից և շատ աննշան տեղերից։ Վիրաւորների մեծագոյն մասը հայեր են։

Ամեն անգամ աւտօմօբիլները անցնելիս հաւաքված ժողովուրդը վարձատրում էր նրանց կեցցէներով, ուռաներով։ Նուիրում էին փող, ծխախոտ, լուցկի, քաղցրաւենի և զանազան տեսակի մթերքներ։

Վիրաւոր զինւորները, քաջալերված՝ իրանց եղբայրների և քոյրերի սիրալիր ընդունելութեամբ, որոնք չէին մոռացել իրանց քաղաքացիական պարտքը կատարել և շտապել են ժպտերես դիմաւորել իրանց, մինչ էլ սիրով էին ընդունում նրանց բոլոր նուէրները և իրանց շնորհակալութիւնները յայտնում։

Աշակերտութիւնը ծաղկեփնջեր էր մատուցանում նրանց։

Փոխադրութիւնը վերջացաւ ժամը մօտ 2-ին, իսկ ժողովուրդը դեռ չէր ցրվում։

Դ. Սարգսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Պատերազմից վնասվածներին օգնող քաղ. կենտրոնական կոմիտէն հոկտ. 16-ից մինչև 31-ը զանազան անձերից, հիմնարկութիւններից և ընկերութիւններից ստացել է 1633 ր. 88 կ.։

◆ Երէկ համառուսական զեմստվային միութեան լիազօրներ կամերհէր Ֆ. Վ. Շլիպպէ և կոմս Պ. Ն. Շերեմետևով քաղաքագլխի և սանիտարա-բժշկական վերատեսչի առաջնորդութեամբ դիտեցին քաղաքում վիրաւորների համար բացված և բացվելիք հիւանդանոցներն ու լազարէթները։

◆ Մօտ օրերս Թիֆլիս կը ժամանի համառուսական զեմստվային միութեան գըլխաւոր լիազօր և Պետ. Դումայի անդամ Մ. Վ. Չելնօկով։

◆ Նոյեմբերի 9-ին Բէլօստօկից Թիֆլիս կը գայ Բագու քաղաքի ծախքով կահաւորված սանիտարական գնացքը կովկասեան ռազմաբեմից վիրաւորներ փոխադրելու։

◆ Նոյեմբերի 6-ին, առաւօտեան, Թիֆլիսի վրայով անց կացրին թիւրքական ռազմաբեմում բռնված պատերազմական գերիների երրորդ խմբին։ Նրանցից 2-ը թիւրք օֆիցէրներ էին, 105-ը զինւորներ, իսկ 19-ը քիւրդ։

◆ Թիֆլիսում կազմակերպած «Կարմիր Խաչի» օրը հաւաքվել է 19,173 ր. 27 կ.։ Բացի այդ հանգանակութիւն եղել է Անդրկովկասի երկաթուղային կայարաններում, որոնց հաշիւը դեռ չէ արված։

◆ Կովկասի քաղաքների միութեան լիազօրը միութեան մէջ մտնող քաղաքագլուխներին յայտնել է Թիֆլիսում կազմվելիք «Սննդեան վաճառքի» ծրագիրը, առաջարկելով նրանց նոյն տեսակ վաճառք կազմել և իրանց քաղաքներում։

◆ Միջնորդութիւն է յարուցված գանձարանից 9000 ր. բաց թողնելու մասին, որպիսի գումարով պէտք է պահվեն Սուխումի, Փոթիի, Բաթումի և Կարսի օրիօրդաց դպրոցները—առաջին երեքը Քութայիսում, իսկ վերջինը Թիֆլիսում։

◆ Այս օրերս, ժողովրդական համալսարանների ընկերութեան նախաձեռնութեամբ, Ալ. Խատիսեան մի դասախօսութիւն է կարդալու «Պատերազմը, նրա զոհերը և հերոսները» թեմայով։

◆ Ինչպէս յայտնի է, Պետրօգրադի նկարիչների ընկ. անդամ է նկարիչ Գէորգ Բաշինջաղեանը։ Վերջին ժամանակներս պ. Բաշինջաղեանը կարգադրել էր, որ այդ ընկ. մէջ ունեցած իր նկարներից մէկը նուիրեն Մեծ Իշխանուհի Մարիա Պաւլովնայի անուան՝ վիրաւոր և հիւանդ զօրականների համար՝ սանիտարական կազմակերպութեան և պահեստի օգտին։ Նկարը արդէն նուիրված լինելով, պ. Բաշինջաղեանը յիշեալ պահեստի կառավարչից շնորհակալական գրութիւն է ստացել։

◆ Այն գինեվաճառներից, որոնք գաղտնի գինի են ծախել, ոստիկանապետը գրաւել է գինիները և յանձնել Կարմիր Խաչի Ընկերութեան։

◆ Հոկտեմբեր ամսվայ ընթացքում Կ. Հ. Բ. Ընկ. ընթերցարանն են յաճախել 3302 հոգի, որից 1861-ը իգական սեռից և 1441-ը՝ արական։ Գրադարանից բաց է թողնված կարդալու համար 2010 գիրք, որից 1292-ը հայերէն և 718-ը ռուսերէն։

ԿՈՎԿԱՍ

◆ Երևանի փոխ-նահանգապետ է նշանակվել փոխարքայի յանձնարարութիւնների պաշտօնեայ Սորէքլիցկի։ Իր խնդրի համաձայն հեռանում է Երևանի նախկին փոխ-նահանգապետ իշխ. Ջեգօղայեվ։

◆ Պետական բանկի Բագուի բաժանմունքի կառավարիչ Բօբիրեվ նշանակվում է Թիֆլիսի պետական բանկի գրասենեակի կառավարիչ։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ժողովրդական Տուն

Հինգշաբթի, նոյեմբերի 6-ին, Հայ Դրամատիկ Խմբակցութեան սիրողները ներկայացրին «Սիրոյ զոհեր» 4 գործ. պիէսը, որը փոխադրված է Ֆ. Կօպպէի վէպից։

Չը գիտենք, վէպը, գուցէ, լաւն է, բայց ինչ վերաբերում է փոխադրված այս պիէսին, պէտք է ասել, որ նա շաղկապված է շատ թոյլ հանգոյցներով և վերին աստիճանի տաղտկալի է, մանաւանդ առաջին երկու գործողութիւնը։

Խաղը առանձնապէս աչքի չէր ընկնում մի բանով։ Բոլոր սիրող դերակատարների մէջ աջող և տիպիկ է միայն պ. Սերժ՝ փողոցային տղայի դերում։ Լաւ էր և պ. Ամօխարազեան վերջին գործողութեան վերջին տեսարանում, երբ գրկում էր իր ապօրինի որդուն։ Վատ չէր և օր. Արծւիկ 10 տարեկան Խրիստինիայի դերում։ Միւս դերակատարները մի կերպ խաղում էին։ Նրանցից շատերը նոյնիսկ իրանց դերերը չը գիտէին, մի հանգամանք՝ որ միշտ նկատելի է։

Նկատենք և այն, որ երրորդ գործողութեան տեսարանը, որ ներկայացնում էր փողոցը, տպաւորիչ էր։ Դեկօրացիաները նոյնպէս աջող էին։

Թատրոնը ծայրէ ի ծայր լի էր։

Ս. Ր.

ՄԱՄՈՒԼ

«НОВ. ВРЕМЯ»-Ն ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Վ. Օպօչինինը «Нов. Вр.»-ի հոկտ. 24-ի համարում զետեղել է հետևեալ յօդուածը հայերի մասին.

Կովկասի փոխարքայի հրամանի մի քանի խօսքը—«Իմ հաւատարիմ զօրքին. անցնել սահմանը և յարձակվել թիւրքերի վրա»,—պաշտօնական հրամանի կարճ, չոր խօսքեր են, բայց նրանցում պատմական ի՞նչ հզօր ձայն է լըսվում։ Կարծես մենք նորից ձեռք ենք առել հին, մանկութիւնից մեզ լաւ ծանօթ մի գիրք, պատահական թափառումներից յետոյ գտել ենք վաղուց ծանօթ հին ճանապարհը։

Չէ որ այդ նոյն Գերմանիան, որի խարդախ թշնամութիւնը պարզվեց այժմ, ներկայ պատերազմի մէջ, ամեն կերպ աշխատում էր մեզ հեռացնել Մօտաւոր Արևելքում ունեցած մեր պարզ և որոշ նպատակներից, յուսադրելով մեզ Հեռաւոր Արևելքի մշուշապատ հեռանկարներով։ Այժմ, երևում է, արդէն գալիս է համաշխարհային հարցեր դնելու ժամանակը, ճակատագիրը հրամայում է Ռուսաստանին գնալ իր պետական դարաւոր նպատակը իրագործելու։

Ռուսաց զօրքերը պէտք է անցնեն կովկասեան սահմանը։ Քանիերորդ անգամն է, որ Ռուսաստանը շարժվում է դէպի հարաւ իրան ծանօթ ճանապարհով։ Նոյն ծանօթ, ուղիղ գիծը. Թիֆլիս—Կարս—Էրզրում, մեր առջև է Փոքր-Ասիայի նոյն բանալին՝ «բազմաճանապարհ Էրզրումը», ինչպէս անուանել է Պուշկինը Պասկևիչի զօրքին ուղեկցելիս, սահմանն անցնելու ժամանակ։

Փոխարքայի նոր հրամանի հետ միասին՝ կրկնվեցին հին, վաղուց լսված հրամանները, մեր ականջին հասած հնութեան շաչիւն ունեցող խանդավառութիւնները, կովկասեան ժողովուրդների հայրենասիրական ոգևորութեան բացագանչութիւնները։

Կովկասի քրիստոնեաների համար—հայերի և վրացիների—այս նոր, սրբազան պատերազմը, նոր, գուցէ և վերջին գլուխն է կազմելու պատմական աղէտների արիւնալի գրքի։ Այժմ տեղին է ռուս հասարակութեանը յիշեցնել, թէ ինչ տեսակ էլ լինեն այս կամ այն տարաձայնութիւնները ազգային խնդրի վերաբերութեամբ խաղաղ ժամանակ, դրանք պատերազմի փորձութիւնների միջոցին չքանում են պատմական ճակատագրի հանդէպ։ Վրաստանի և Հայաստանի վերջին դարերի ողջ պատմութիւնը—այդ անընդհատ պաշտպանութիւն է վայրենի մուսուլման նուաճումների դէմ, այդ անլռելի աղերս օգնութեան՝ ուղղված հիւսիսի քրիստոնեայ հզօր ռուսներին։ Եւ այդ՝ օգնութեան եկող քրիստոնեայ ռուսները այժմ նոյնպէս պէտք է յենվեն տեղացի քրիստոնեաների կատարեալ համակրութեան և աջակցութեան վրա, ինչպէս յենվել են կովկասեան նախկին պատերազմների ժամանակ։ Ոչ նախկին վարչապետների անաջող արշաւանքները, ոչ արտասահմանեան անհիմն և անհոգ ինտելիգենտների նախկին դաւանանքները, ոչինչ չի խախտի պատմական միութեան սրբազան պատգամները, որ երբեմն խորապէս գիտակցել է ողջ ժողովուրդը և արդէն արդարացել ու ամրապնդվել է պատերազմի դաշտում։

Մենք նորից լսում ենք այն արշաւանքների մասին, որոնց մասին լսել ենք արդէն թիւրքական անցեալ պատերազմին։ Բայազիդի պաշտպանութեան հերոս ենթագնդապետ Շտօկվիչ իր գնդով ազատվել է մի հայի*) արիութեան շնորհիւ, որը յանձն է առել անցնել թիւրք պաշարող զօրքի միջից և հաղորդել մի ուրիշ հայի՝ Տէր-Ղուկասեանին, որ օգնութեան հասնի, երբ Բայազիդի ռուս զօրքը մկներով էր կերակրվում։ Եւ այդ քաջ հետախոյզը ներկայացված է հայ գրականութեան մէջ որպէս ազգային հերոս. և ոչ հայերի թշնամի իշխ. Գոլիցինի իշխանութիւնը, ոչ յեղափոխական կազմակերպութիւնները չը ջնջեցին և չը թուլացրին այդ պայծառ յիշողութիւնները։

Ուրիշ էլ ի՞նչ կերպ կարող է լինել, երբ հայ գիւղերում «Թիւրք» խօսքը նախատական, սպառնական խօսք է, որով մայրերը վախեցնում են իրանց լացող երեխաներին։

«Պասկևիչը հաստատ յենվել էր հայերի դէպի Ռուսաստանը ունեցած անձնուիրութեան վրա. Նա գիտէր, որ իրան սիրելով միաժամանակ, հայերը սեփական գործ կանեն», այսպէս է գրում ռուս պատմագիր Սերգէյ Գլինկան իր «Описаній переселенія Армянъ Адзербижанскихъ» գրքում, որ հրատարակված է 1831 թ.։ Միանգամայն նոյն տեսակի կարծիքների ենք պատահում աւելի վաղ, Երմօլովի գրութիւնների մէջ. «Իսկ հայերը մեզ հաւատարիմ են միշտ. ոչ միայն ուտեստ ոչ մի մթերք չեն տալիս Աբբաս Միրզային, այլ կոչնչացնեն նրա զօրքը և կը ցրեն»։

Դեռ Պետրոս Մեծն իր՝ պետական զարմանալի պայծառատեսութեամբ նախատեսեց Կովկասի հայ ժողովրդի նշանակութիւնը ռուսաց գործի համար։ Ահա թէ ինչ է գրում նա իր՝ Վօլինսկիին ուղղած հրամանում. «Հետազօտութիւններ անել հայ ժողովրդի մասին, թէ շա՞տ են նրանք արդեօք և ի՞նչ տեղերում են ապրում, և ունե՞ն նրանք արդեօք գիտակ մարդիկ ազնուականներից կամ վաճառականներից, և ինչպէս են վերաբերվում նրանք թագաւորական մեծութեան. վարվել նրանց հետ սիրալիր և թեքել դէպի բարեկամութիւն»։

Կովկասի պատերազմների մեր ողջ պատմութիւնը լի է—տեղացիների վրացիների և հայերի—անուններով, աչքի ընկնող հրամանատարներով, որոնք ռուս իշխանութեան հրահանգների ամենահաւատարիմ կատարողներն են եղել։ Չի եղել և չի լինի դաւաճանութեան և ոչ մի դէպք։ Իշխաններ՝ Ցիցիանով, Մադաթեան, Արղութեան, Բեհբութեան, Անդրոնիկով, կոմս Լօրիս-Մելիքեան, Լազարեան, Տէր-Ղուկասեան, իշխաններ՝ Ամիրաջիբի, Ճավճավաձէ, Ամիլախվարի—այս բոլորը կովկասեան պատերազմների առաջին կարգի գեներալներ են, որոնց իւրաքանչիւրի անուան հետ կապված է յաղթանակի և հող նուաճելու յիշողութիւններ։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիս, 4 նոյեմբերի

Յօգուտ հայկական հիւանդանոցի ստացված են. Ելենա Միխայլովնա Ադելխանեանից 50 զոյգ հողաթափ, Մ. Պ. Միրզոյեանից նոյնպէս 50 զոյգ տաք հողաթափ, Մնացական Մարտիրոսեանից 50 ր. 40 կ., Ս. Ա. Աբէլեանից 100 ր., Գ. Գ. Շաղինեանից 50 ր., Մ. Ի. Մարտիրոսեանից 54 ր. 40 կ., Տ. Ի. Տէր-Ստեփանեանից, Ե. Բ. Բաղդոյեանից և Ե. Գ. Գալստեանից ամէն ամիս 5-ական ր., մի ոմնից 5 շապիկ, մի ուրիշից 4 վարտիք և մի բարձի երես։

Վարսավիր Կ. Տ. Խվավլովը յանձն է առել ձրի ածիլել և խուզել վիրաւորեալներին։

Խորհուրդ

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ՓՈՐՁՎԱԾ
ՎԱՐԺՈՒՀԻ
տալիս է ֆրանսերէնի և գերմաներէնի դասեր։ Հասցէն Кирпичный пер. № 11, ներքին յարկ։ 981. 3—3

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Լ. ՏՈԼՍՏՈՅԻ հետևեալ երկերը
1) ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ, թարգմ. Սուրխաթեանի . . . . . . 30 կ.
2) ԿՈՆՖՈՒՑԻՈՍ (Չինական իմաստունը), խմբագրութեամբ Լ. Ն. Տօլստոյի, կազմեց Ա. Բուլանժէ, թարգմ. Սուրխաթեանի . . . . 7 կ.
3) ԱՍԱՑՈՒԱԾՔՆԵՐ ՄԱՀՕՄԵԴԻ, ընտրված Լ. Տօլստոյից, թարգմ. Լ. Դանիէլեանի . . . . . 5 կ.
4) ՔՕՅՐԵՐԸ, թարգմ. Դանիէլեանի . 5 կ.
5) ԻՆՉՈՎ ԵՆ ԿԵՆԴԱՆԻ ՄԱՐԴԻԿ, թարգմ. Լ. Դանիէլեանի . . . 10 կ.
Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակը պահանջեն մեզանից փոքր կանխիկ ուղարկելով, կը ստանան 10% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղչ չի լինի։
Հասցէն՝ Ред. газ. «Мшакъ», Тифлисъ. 0—5

---

*) Թիւրքահայերի մէջ նկատելի էին գլխներին մօրթօններ (մորթու մեծ գդակ) դրած շատ երիտասարդներ, որոնք այս կողմերի քաղաքներում և աւաններում ցրված՝ պարապում են մեծ մասամբ հացթխութեամբ, կօշկակարութեամբ, կօշիկ սրբելով և այլ արհեստներով և վերջապէս մրգավաճառութեամբ։ Այդպիսիներին ես այս ամառ հանդիպեցի նոյն իսկ հեռու հիւսիսի՝ Օրեօլ, Լիպեցկ, Բրեանսկ և այլ քաղաքներում։ Պէտք է ասել, որ, եւրոպական պատերազմը սկսվելուց յետոյ, սրանք բոլորը սրտատրոփ այս րոպէին էին սպասում, այսինքն ռուս-թիւրքական ընդհարման, որ գործ ու արհեստները թողնելով շտապէին և պատերազմի դաշտը նետվէին. և ահա ամեն օր մենք ականատես ենք, թէ ինչպէս նրանք խումբ-խումբ գալիս անցնում են՝ «երկիր» հասնելու։ Տեսնելով այդ աշխոյժ երիտասարդներին հայրենի երկրից հալածական. օտար երկրի, օտար սովորութեան ու բարքերի մէջ ցրված, զուրկ մայր երկրի հետ, շատ անգամ, մի որևէ բարոյական կապով կապված լինելուց, սիրտս է ցաւել։

Ճիշդ է, նրանցից շատերին ես տեսել եմ գրագէտ, և քիչ չէ պատահել տեսնել նրանց կամ Րաֆֆիի մի որևէ գիրքը, կամ ձեռքէ ձեռք անցած մի բրօշիւր, մի թերթ կարդալիս. Ճշմարիտ է, սա մխիթարական մի գրաւական եմ համարել, սակայն այնու ամենայնիւ անոյժ և թոյլ, երբ ի նկատի ունենանք նրանց երիտասարդ հասակը. մի հասակ մեր կեանքում՝ շատ ոգևորվող, շատ մոլորութեան ենթարկվող. իսկ շրջապատը մոլորեցնող պարագաներ ինչքա՞ն կուզէք. և ի՞նչ խօսք, որ միայն ժամանակի հարց է, որ սրանք ամենքը ձուլվէին իրանցից աւելի ուժեղ տարրերի հետ, և նրանց ազդեցութեան տակ յաւէտ կորչէին և բուն հայրենիքի համար բնաւ չքանային։

*) Խօսքը Րաֆֆիի «Խենթի» հերոս Վարդանի՝ Սամսոն Տէր-Պօղոսեանի մասին է։ Խմբ.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный